Մրցակցության
պաշտպանության հանձնաժողով

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ 5

2 ԿԱՐԵՎՈՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ 7

3 ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1. Գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություններ 9

3.2. Պետական գնումներում մրցակցության խախտումներ 13

3.3. Համակենտրոնացումներ և պետական օժանդակություն 16

3.3.1. Համակենտրոնացումներ 16

3.3.2. Պետական օժանդակություն 18

3.4. Դատարանների վճիռները Հանձնաժողովի որոշումների վերաբերյալ 20

3.5. Ոլորտային ուսումնասիրություններ 23

3.5.1. Էլեկտրաէներգետիկայի ոլորտ 24

3.5.2. Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ֆինանսավորման ոլորտ 26

3.5.3. Ծխախոտի արտադրանքի ոլորտ 27

3.5.4. Պահնորդական գործունեության ոլորտ 28

3.5.5. Էլեկտրոնային հարթակներով փոխադրման ծառայությունների մատուցման ոլորտ 31

3.6. Օրենսդրական փոփոխություններ 36

3.7. Մրցակցության զարգացումը վերջին 5 տարիներին 39

4 ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Անբարեխիղճ մրցակցության վերահսկողություն 42

4.2. Սպառողների շահերի պաշտպանություն 44

5 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

5.1. Հանձնաժողովի կառուցվածքի բարեփոխումները 51

5.2. Հանձնաժողովի մեթոդաբանական բազայի ամրապնդում 53

5.3. Հանձնաժողովի գործընթացների թվայնացում 54

5.4. Կրթական ու գիտական համագործակցություն 55

5.5. Հանրային իրազեկման միջոցառումներ 56

5.6. Միջազգային համագործակցություն 58

6 ԱՊԱԳԱՅԻՆ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 68

7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

7.1. Ֆինանսական հաշվետվություն 71

7.2. Հանձնաժողովի կառուցվածքը 73

# 1 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

## ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՄՊՀ նախագահ**

2023 թվականի համար Հանձնաժողովը նախանշել էր երեք հիմնական ուղղություն՝ սպառողների շահերի պաշտպանություն, ուշ վճարումների խնդրի կարգավորում և թվային հարթակների կարգավորումների և սեփական թվային գործիքների կատարելագործում, և պետք է արձանագրենք, որ բոլոր երեք ուղղություններով էլ Հանձնաժողովն այս տարվա ընթացքում մեծ առաջընթաց է ապահովել:

Սպառողների շահերի պաշտպանությունը միշտ էլ եղել է Հանձնաժողովի համար առաջնահերթ ուղղություններից մեկը, սակայն այս տարի Հանձնաժողովը ձեռնամուխ էր եղել նոր որակական մակարդակի հասցնել իր կարողություններն այս ոլորտում՝ համարժեքորեն արձագանքելու առաջացած նոր ռիսկերին և մարտահրավերներին:

Որպես արդյունք՝ 2023 թվականին Հանձնաժողովը ձևավորել է սպառողների շահերի պաշտպանության համար պատասխանատու առանձին ստորաբաժանում: Զուգահեռաբար, բարձր գնահատելով միջազգային կապերի ամրապնդումն ու միջազգային լավագույն փորձի վրա հիմնված մոտեցումների որդեգրումը սպառողների շահերի պաշտպանության հարցում, Հանձնաժողովը 2023 թվականին դարձավ Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցի (ICPEN) գործընկեր:

Ավելի քան 70 անդամ - երկիր ունեցող այս համաշխարհային հարթակին միանալը մեզ համար բացառիկ կարևորության քայլ էր, որը վստահաբար կդառնա Հայաստանում սպառողների շահերի պաշտպանության կայուն և երկարաժամկետ զարգացման հիմքերից մեկը:

Մատակարարումների դիմաց ուշ

վճարումների խնդրի կարգավորման հարցում նույնպես Հանձնաժողովը 2023 թվականին արձանագրեց զգալի դրական արդյունքներ:

Հանձնաժողովը մշակել և Ազգային ժողովին է ներկայացրել ուշ վճարումների խնդիրը լիարժեքորեն կարգավորող օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որն ամբողջությամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից: Արդեն 2024 թվականին առևտրային ցանցերի գործունեության ոլորտը նկատելիորեն ավելի կարգավորված կլինի, այդ թվում նաև մատակարարներին վճարումների կատարման հարցում:

Զուգահեռաբար ուշ վճարումների խնդիրը երկար տարիներ առկա էր նաև գյուղատնտեսական մթերքների մատակարարման ոլորտում, ինչի կապակցությամբ ևս իրականացվել են օրենսդրական բարեփոխումներ:

Թվային հարթակների կարգավորման և սեփական թվային գործիքների կատարելագործման հարցում Հանձնաժողովը 2023 թվականին իրականացրել է միանգամից մի քանի տարբեր միջոցառումներ:

Առաջին հերթին՝ տարբեր ոլորտներում գործող գերիշխող դիրք ունեցող էլեկտրոնային հարթակների վարքագծի վերաբերյալ հարուցվել են մի շարք վարույթներ, որոնցից մեկով նշանակվել է ավելի քան 300 միլիոն դրամ տուգանք:

Մյուս կողմից Հանձնաժողովը ոլորտային ուսումնասիրություն է իրականացրել էլեկտրոնային հարթակներով փոխադրման ծառայությունների մատուցման ոլորտում՝ բացահայտելով մի շարք խնդիրներ, այդ թվում՝ օրենսդրական կարգավորման բացեր: Կարևոր եմ համարում ընդգծել, որ Հանձնաժողովը հետևողական է լինելու իր կողմից բարձրաձայնված խնդիրների լիարժեք և համակողմանի լուծման և թվային հարթակների ամբողջական կարգավորման հարցում:

Սեփական թվային գործիքների կատարելագործման իմաստով Հանձնաժողովը զարգացրել է իր կարողությունները թե՛ e-compete էլեկտրոնային հարթակի հնարավորությունների ընդլայնման, թե՛ այլ պետական մարմինների հետ համագործակցությամբ էլեկտրոնային տվյալների հասանելիրության բարձրացման միջոցով:

Ինչ վերաբերում է 2024 թվականին իրագործվելիք նոր ծրագրերին ու նախաձեռնություններին, պետք է նշեմ, որ Հանձնաժողովի բոլոր գործողությունները հիմնված են հետևյալ գաղափարի վրա՝ մրցակցության զարգացման հիմնասյունը կրթված և գիտակից տնտեսավարող սուբյեկտներն ու սպառողներն են:

Զուգահեռաբար արագ փոփոխվող այս դարաշրջանում Հանձնաժողովը հանձնառու է էլ ավելի բարձր որակի հասցնել սեփական գործողություններն իր լիազորությունների ամբողջ շրջանակում՝ միտված հասարակության բոլոր խմբերի հետ ազնիվ և թափանցիկ երկխոսության կայացմանը:

# 2 ԿԱՐԵՎՈՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

## Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ

Մրցակցության պաշտպանության **հանձնաժողովն ինքնավար մարմին է՝** կազմված 7 անդամից (նախագահ և վեց անդամ), որոնց նշանակում է **Ազգային ժողովը:**

## ԻՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ

Հանձնաժողովն ապահովում է տնտեսական գործունեության **ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը,** բարեխիղճ մրցակցության և ձեռնարկատիրության զարգացման համար **անհրաժեշտ միջավայրը** և իրականացնում է **սպառողների շահերի պաշտպանությունը:**

Հանձնաժողովի գործունեության գլխավոր նպատակակետը ազատ տնտեսական մրցակցության **ապահովումն է տնտեսության զարգացման և երկրի առաջընթացի համար:**

# 3 ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

# 3.1 ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ԵՎ ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունենալը ենթադրում է **շուկայական իշխանության և շուկայի վրա միակողմանի ազդեցության** հնարավորություն:

Գերիշխող դիրքի չարաշահումը վերաբերում է այն դեպքերին, երբ տնտեսավարող սուբյեկտն օգտագործում է իր շուկայական գերակայությունը՝ **ի վնաս մրցակիցների կամ սպառողների:**

Գերիշխող դիրքի չարաշահման դեպքերը կարող են ներառել **խտրական գների սահմանումը, ապրանքի գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը, շուկայում չհիմնավորված դեֆիցիտի ստեղծումը:**

**Ավելի մանրամասն՝** [այստեղ]

**Լուսինե Ղազարյան**
*Գերիշխող դիրքի և պետական մարմինների հակամրցակցային գործողությունների վերահսկողության բաժնի պետ*

*«Գերիշխող դիրքի և պետական մարմինների հակամրցակցային գործողությունների վերահսկողության բաժինը 2023 թվականին առավելապես կենտրոնացել էր առցանց հարթակների և բանակցային ուժեղ դիրք ունեցող առևտրային ցանցերի գործունեության վրա՝ հաշվի առնելով այս ոլորտների արագ զարգացումը և դրանցում առկա մրցակցային ռիսկերը»:*

**Գրաֆիկ 1.** Մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություններ

***Վարույթների քանակ*** *(ներառյալ բանակցային ուժեղ դիրքի չարաշահման վարույթի մասին տեղեկություն)*



## *ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՈՒԺԵՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԿՈՂՄԻՑ*

**«Սիթի»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2022 թ.-ի հունվարի 1-ից մինչև 2022թ.-ի օգոստոսի 30-ը և 2022 թ.-ի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում, ունենալով բանակցային ուժեղ դիրք, համադրելի կարագ ապրանքատեսակների իրացման գործընթացում չհիմնավորված արհեստական տարբերություններ է սահմանել և կիրառել այլ մատակարար տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ՝ նրանց կողմից մատակարարված կարագ ապրանքատեսակների մասով կիրառելով բարձր շահութաբերության մարժաներ, իսկ «Ալեքս Էնդ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից մատակարարված կարագ ապրանքատեսակների նկատմամբ առանց հստակ, օբյեկտիվ և հիմնավորված չափանիշների կիրառել է ցածր մարժաներ՝ ապահովելով մրցունակ գին, ինչի արդյունքում «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերությունը հայտնվել է առավել նպաստավոր պայմաններում՝ ունենալով մատակարար այլ տնտեսավարող սուբյեկտների ապրանքների համեմատ առավել մեծ իրացման ծավալներ:

Վերոնշյալի հաշվառմամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի՝ «Սիթի» ընկերության գործողությունները կամ վարքագիծը պարունակում են խտրական պայմանների կիրառման, մրցակցի ապրանքների իրացման համար էական նշանակություն ունեցող պայմանների միջև չհիմնավորված տարբերությունների սահմանման կամ կիրառման հատկանիշներ, որի արդյունքում «Սիթի» ընկերության հետ փոխկապակցված «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերությունը ստացել է մրցակցային առավելություն, ինչը որակվել է որպես խտրական պայմանների կիրառմամբ բանակցային ուժեղ դիրքի չարաշահում, ինչի համար «Սիթի» ընկերության նկատմամբ նշանակվել է **76 340 000** դրամի չափով տուգանք:

## *ԿԱՅԱՐԱՆԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՌՅԱՆՑ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ «BOOKING.COM B.V.» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ*

Հանձնաժողովը պարզել էր, որ «BOOKING.COM B.V.» ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունը ներառված է «Ընդլայնված պարիտետով երկրների» խմբի մեջ, որը արգելում է հյուրանոցային տնտեսության օբյեկտին սեփական կայքում կամ այլ հարթակներում օնլայն գրանցումների կամ հյուրանոցի տարածքում ֆիզիկապես պատվիրման ժամանակ առավել ցածր գին առաջարկել, քան սահմանված է «BOOKING.COM B.V.» ընկերության հարթակում:

Արդյունքում՝ «BOOKING.COM B.V.» ընկերությունը, սահմանելով հյուրանոցային տնտեսության օբյեկտների կողմից ավելի նվազ արժեքով այլ կամ սեփական հարթակներում ծառայությունների մատուցման արգելք, զրկում է վերջիններիս առավել մեծ ծավալի վաճառք ունենալու և, ըստ այդմ, եկամուտ ստանալու հնարավորությունից: Նշվածից հետևում է, որ պարտադրվող պայմանն ակնհայտ ոչ շահավետ է հյուրանոցային տնտեսության օբյեկտների համար և սահմանափակում է նրանց անկախությունը որոշումների կայացման հարցում:

Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ սահմանված պայմանները ոչ միայն շահավետ չեն, այլև պայմանագրի առարկային չեն վերաբերում, տնտեսապես և (կամ) տեխնոլոգիապես հիմնավորված չեն: Մասնավորապես, «BOOKING.COM B.V.» ընկերության և կացարաններ տրամադրող տնտեսավարող սուբյեկտների միջև կնքված պայմանագրի առարկան վերաբերում է «BOOKING.COM B.V.» ընկերության կողմից կացարանի առցանց ամրագրման ծառայությունների մատուցմանը: Մինչդեռ «Ընդլայնված պարիտետով» սահմանված կարգավորումները վերաբերում են կացարաններ տրամադրող տնտեսավարող սուբյեկտների և երրորդ անձանց հարաբերություններին:

Ընդ որում, «BOOKING.COM B.V.» ընկերության կողմից նման պայմանների սահմանումը նրա գործունեություն ծավալելու հնարավորության վրա որևէ կերպ չեն ազդում, այսինքն՝ «BOOKING.COM B.V.» ընկերությունը իր գործունեությունը կարող է իրականացնել նաև դրանց բացակայության պայմաններում: Դա հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ շատ երկրներում «BOOKING.COM B.V.» ընկերությունը աշխատում է առանց որևէ համանման կարգավորման կամ կիրառում է «նեղ պարիտետի» սկզբունքը, որը համանման գնառաջարկի պահանջ է սահմանում միայն հյուրանոցային տնտեսությունների պաշտոնական կայքի համար:

Հատկանշական է նաև, որ «BOOKING.COM B.V.» ընկերությունն առաջարկում է Հարթակին միանալու պայմանագիր, որի

դրույթները քննարկման ենթակա չեն, և որը կնքվում է հենց «BOOKING.COM B.V.» ընկերության կողմից միակողմանիորեն որոշված բովանդակությամբ և պայմաններով:

Այսինքն՝ «BOOKING.COM B.V.» ընկերության կողմից հյուրանոցային տնտեսության օբյեկտներին պարտադրվել են ոչ շահավետ և պայմանագրի առարկային չվերաբերող տնտեսապես և (կամ) տեխնոլոգիապես չհիմնավորված պայմաններ: Հանձնաժողովը «BOOKING.COM B.V.» ընկերության վարքագիծը որակել է գերիշխող դիրքի չարաշահում, ինչի համար նշանակել է տուգանք **337 555 000 դրամի չափով:**

Միաժամանակ, Հանձնաժողովը «BOOKING.COM B.V.» ընկերությանը հանձնարարել է հյուրանոցային տնտեսության օբյեկտների հետ արդեն իսկ կնքված պայմանագրերից հեռացնել «Ընդլայնված պարիտետի» դրույթները և այլևս նման դրույթներ չսահմանել պայմանագիր կնքել ցանկացող անձանց առաջարկվող պայմանագրերում:

Որպես արդյունք՝ «BOOKING.COM B.V.» ընկերությունը Հանձնաժողովի վարույթից հետո փոխել է իր քաղաքականությունը ՀՀ հյուրանոցային տնտեսությունների հարցում՝ փոխարինելով «Ընդլայնված պարիտետի» սկզբունքը «Նեղ պարիտետի» տարբերակով, որը գործում է եվրոպական բազմաթիվ երկրներում:

# 3.2 ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Պետական մարմնի հակամրցակցային գործողությունները վերաբերում են պետական մարմինների կողմից իրականացվող ցանկացած գործողությունների, որոնք **վնասում են մրցակցությունը:**

Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ են՝ խտրական պայմանների սահմանումը և կիրառումը, **ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումը**, այլ պետական մարմինների, տնտեսավարող սուբյեկտների կամ դրանց պաշտոնատար անձանց հետ **հակամրցակցային համաձայնությունները** և այլն:

**Ավելի մանրամասն՝** [այստեղ]

**Տաթևիկ Հովհաննիսյան**

*Հակամրցակցային համաձայնությունների և պետական գնումների վերահսկողության բաժնի պետ*

*«2023 թվականը նշանակալի էր Հակամրցակցային համաձայնությունների և պետական գնումների վերահսկողության բաժնի համար պետական գնումների համակարգի բարեփոխման աշխատանքներով, ինչի արդյունքում մոտ ապագայում կունենանք էլեկտրոնային գնումներում հակամրցակցային գործողությունների բացահայտման համար նոր, արհեստական բանականության տարրերով համալրված թվային գործիքակազմ»:*

**Գրաֆիկ 2.** Պետական գնումների վերաբերյալ իրավախախտումներ

*Վարույթների քանակ*



## *ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱԿԱՄԱՐՑԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ*

Հանձնաժողովն ուսումնասիրել է պետության կողմից տեղեկատվական համակարգի սպասարկման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգը: Ըստ ընթացակարգերի հրավերի՝ մասնակիցները պետք է բավարարեին ընթացակարգի հրավերի ոչ գնային պայմանների մասով սահմանված նվազագույն պահանջներին:

Այսպես՝ մասնագիտական փորձառության և աշխատանքային ռեսուրսների գնահատման համար նախատեսված է 35-ական միավոր, իսկ գնային պայմանի համար՝ 30 միավոր: Ընդ որում, ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ, եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Հանձնաժողովն ուսումնասիրել է տեղեկատվական համակարգի սպասարկման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով պետության կողմից հայտարարված գնման ընթացակարգը: Ըստ ընթացակարգերի հրավերի՝ մասնակիցները պետք է բավարարեին ընթացակարգի հրավերի ոչ գնային պայմանների մասով սահմանված նվազագույն պահանջներին:

Այսպես՝ մասնագիտական փորձառության և աշխատանքային ռեսուրսների գնահատման համար նախատեսված է 35-ական միավոր, իսկ գնային պայմանի համար՝ 30 միավոր: Ընդ որում, ոչ գնային պայմանների գնահատման չափանիշներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման: Միևնույն ժամանակ, եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով սահմանված է, որ աշխատակազմում պետք է ներգրավված լինի առնվազն 12 հոգուց բաղկացած SS ոլորտի ծրագրային ապահովումների նախագծման և մշակման անձնակազմ՝ պատվիրատուի կողմից պահանջված համամասնությամբ և մասնագիտական աշխատանքային փորձով:

Հանձնաժողովի կողմից իրականացված

ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նման չափորոշիչների սահմանումը համապատասխան կարիքների բավարարման համար չեն ունեցել օբյեկտիվ հիմնավորումներ և հանդիսացել են սահմանափակող հանգամանք տընտեսավարող սուբյեկտների կողմից գնման ընթացակագին մասնակցելու համար: Ավելին՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների, ինչպես նաև ընթացակարգին վերաբերելի նամակագրության ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ նշված չափանիշների սահմանման արդյունքում գնահատող հանձնաժողովի համար խնդրահարույց է դարձել մասնակիցների հայտերի գնահատումը, քանի որ, ըստ էության, առկա չեն եղել հայտերի գնահատման հստակ չափանիշներ և մեխանիզմներ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ մի կողմից՝ սահմանված են եղել չհիմնավորված և տնտեսավարող սուբյեկտների մասնակցությունը սահմանափակող չափորոշիչներ, իսկ մյուս կողմից՝ առկա չեն եղել գնահատման հստակ մեխանիզմներ, ինչը ստեղծել է որևէ մասնակցին անհիմն մրցակցային առավելություն տալու հնարավորություն:

Այսպիսով՝ այս վարույթի շրջանակներում Հանձնաժողովն ընդգծել է, որ **պետական մարմնի հակամրցակցային գործողություններ** են հավասարապես թե՛ պետական գնման համար անհրաժեշտ, հիմնավորված պայմանների շրջանակից բացի հավելյալ պայմանների առկայությունը, ինչն ուղղակիորեն սահմանափակում է տնտեսավարող սուբյեկտների մասնակցության հնարավորությունը և ազդում է մրցակցության վրա, և թե՛ անհրաժեշտ հստակության բացակայությունը, որն այս դեպքում արտահայտված էր գնահատման մեխանիզմների բացակայությամբ, ինչը ևս մըրցակցության իմաստով խնդրահարույց է, քանի որ առաջացնում է գնումների գործընթացից տնտեսավարող սուբյեկտների անհիմն դուրսմղման ռիսկեր:

# 3.3. ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## 3.3.1 Համակենտրոնացումներ

*«2023 թվականին նախորդ տարիների համեմատ աճել են հորիզոնական համակենտրոնացումների գնահատման դեպքերը, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել էլեկտրական էներգիայի ոլորտում, ինչը պայմանավորված է էլեկտրական էներգիայի շուկայի ազատականացմամբ»:*

| | 2018 | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2018-2023 (%) |
|---|---|---|---|---|---|---|---|
| Համակենտրոնացման թույլտվության գնահատման վարույթներ | 25 | 29 | 12 | 28 | 54 | 64 | +156% |
| Չհայտարարագրված համակենտրոնացումներ | 7 | 7 | 2 | 11 | 14 | 16 | +129% |
| Անձանց խումբ /ցուցակի հրապարակում/ | - | - | - | 6 | 13 | 29 | |
| Անձանց խումբ /հրապարակման մերժում/ | - | - | - | - | 3 | 6 | |

Տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության փոփոխություններով մի շարք նոր կարգավորումներ են նախատեսվել նաև համակենտրոնացումների գնահատման կապակցությամբ:

Մինչև օրենսդրական փոփոխությունները համակենտրոնացում չեն համարվել միայն այն դեպքերը, որոնք իրականացվում էին անձանց խումբ հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների միջև: Օրենքի փոփոխությունների արդյունքում համակենտրոնացում չհամարվող դեպքերն ընդլայնվել են՝ ներառելով ֆոնդային բորսաներում ցուցակված արժեթղթերի ձեռքբերման վերաբերյալ գործարքները, դատական ակտի հիման վրա իրականացվող աճուրդների միջոցով կնքված գործարքները և ժառանգության ընդունումը:

Ի տարբերություն նախկին կարգավորման՝ նոր կարգավորումներով համակենտրոնացում են համարվում նաև անձանց խմբի միջև տեղի ունեցող գործարքները՝

Համակենտրոնացումների նկատմամբ Հանձնաժողովի վերահսկողությունն անհրաժեշտ է համակենտրոնացման հետևանքով **մրցակցային իրավիճակը գնահատելու** և **սպառողների շահերի** վնասման ռիսկը պարզելու համար:

Համակենտրոնացումների գնահատումը թույլ է տալիս պատկերացում կազմել շուկայի դինամիկայի, մրցակցության համար հնարավոր ռիսկերի մասին, ինչի արդյունքում Հանձնաժողովը կարողանում է **կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ այդ ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:**

**Ավելի մանրամասն՝** [այստեղ]

բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքի կնքումից մեկ ամիս առաջ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ Հանձնաժողովին է ներկայացվում անձանց խմբի ցուցակ և հիմնավորումներ, որը Հանձնաժողովը քննարկում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Կարևորագույն փոփոխություններից էր «պարզեցված ընթացակարգի» ինստիտուտի ներդրումը, որը հնարավորություն է տալիս խառը համակենտրոնացումը և անձանց խմբում ընդգրկված տնտեսավարող սուբյեկտների համակենտրոնացումը գնահատել 1-ամսյա ժամկետում, ինչի շնորհիվ տնտեսավարող սուբյեկտները հեշտացված կարգով և կարճ ժամկետներում են իրականացնում հայտարարագրման գործընթացը:

2023 թվականին Հանձնաժողովի կողմից թույլատրվել է թվով 60 համակենտրոնացում, որոնցից 7-ը հանդիսացել են հորիզոնական, 5-ը՝ ուղղահայաց, 42-ը՝ խառը, 6-ը՝ անձանց խմբի միջև համակենտրոնացումներ:

Հատկանշական է, որ 2023 թվականին էլեկտրական էներգիայի ոլորտում իրականացվել են թվով 4 համակենտրոնացման գնահատման վարույթներ, որը պայմանավորված էր էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացմամբ և դրանով պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների կողմից նշված ոլորտում գործունեություն ծավալելու հետաքրքրությամբ:

Համակենտրոնացման գնահատման վարույթների արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ համակենտրոնացման մասնակիցները գործում են «Էլեկտրական էներգիայի առաքում» ապրանքային շուկայում:

«Էլեկտրական էներգիայի առաքում» ապրանքային շուկայում արտադրված էլեկտրական էներգիայի ընդհանուր ծավալի, ընդհանուր ծավալում համակենտրոնացման մասնակիցների ունեցած ծավալների, ինչպես նաև վերջիններիս արտադրական ծավալների հնարավորությունների դիտարկման արդյունքում Հանձնաժողովը թույլատրել է նշված համակենտրոնացումները:

# 3.3.2 Պետական օժանդակություն

**Գրաֆիկ 3.** Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ

*Վարույթների քանակ ներառյալ բանակցային ուժեղ դիրքի չարաշահման վարույթի մասին տեղեկություն*




Վերջին տարիներին Հանձնաժողովը պետական օժանդակության ինստիտուտի կատարելագործման ուղղությամբ մի շարք աշխատանքներ է իրականացրել՝ ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պարզեցված մեխանիզմի ներդրման ուղղությամբ: Նշվածին զուգահեռ մի շարք միջոցառումներ են իրականացվել պետական մարմինների իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղությամբ:

2023 թվականին առաջին անգամ իրականացվել է արգելված պետական օժանդակության վերաբերյալ վարույթ, որի արդյունքում պետական մարմնի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց:

Հանձնաժողովը վարույթի արդյունքում պարզել էր, որ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը (ՀՀ ԱԱՊ) հանդիսանալով ապրանքի ծագման երկրի հավաստագրերի տրամադրման լիազոր մարմինը և լինելով այդ

Պետական օժանդակությունը՝
1) տրամադրվում է **պետական մարմնի կողմից հանրային ֆինանսների կամ հանրային ռեսուրսների հաշվին:**
2)ստանում են **տնտեսավարող սուբյեկտները:**
3) դրսևորվում է որոշակի **ընտրողականությամբ:**
4) ստեղծվում է **տնտեսական առավելություններ:**

Պետական օժանդակությունը կարող է ներառել ցանկացած օժանդակություն, օրինակ՝ **սուբսիդիա, դրամաշնորհ, վարկերի տրամադրում արտոնյալ տոկոսադրույքով** և այլն:

Բացառությամբ **օրենքով նախատեսված դեպքերի,** ապրանքային շուկայում **մրցակցությունը սահմանափակող** կամ **սպառողների շահերը ճնշող պետական օժանդակությունը արգելվում է:**

**Ավելի մանրամասն՝ այստեղ**

գործընթացի պատասխանատուն, օրենքով իրեն վերապահված գործառույթի իրականացման համար անհրաժեշտ ապրանքի ծագման երկրի փորձաքննությունների իրականացումը վերապահել է «Արմէքսպերտիզա» ընկերությանը: «Արմէքսպերտիզա» ընկերությունը հիմնադրվել է 2002 թվականի մայիսի 17-ին, որի կանոնադրական կապիտալի 100 տոկոս փայաբաժնի սեփականատեր և հիմնադիր մինչև 2010 թվականի հունվարի 22-ը հանդիսացել է ՀՀ ԱԱՊ-ն:

2010 թվականին «Արմէքսպերտիզա» ընկերության գործունեությունը ենթարկվել է դիվերսիֆիկացիայի՝ ներգրավելով և ավելացնելով տարբեր տեսակի փաստաթղթային փորձաքնություններ, ինչին զուգահեռ նաև տեղի է ունեցել «Արմէքսպերտիզա» ընկերության մասնավորեցում, ինչից հետո նույնպես ապրանքների ծագման հավաստագրի տրամադրման գործառույթի շրջանակներում փորձաքննությունների իրականացումը շարունակել է իրականացնել բացառապես «Արմէքսպերտիզա» ընկերությունը:

Վարույթի արդյունքում արձանագրվել էր, որ ՀՀ ԱԱՊ-ի կողմից օրենքով իրեն վերապահված գործառույթի, մասնավորապես՝ ապրանքի ծագման երկրի հավաստագրերի տրամադրման շրջանակում փորձաքննությունների իրականացումը «Արմէքսպերտիզա» ընկերությանը բացառիկությամբ վերապահելը հանգեցրել է ապրանքի ծագման երկրի հավաստագրերի տրամադրման շրջանակում փորձաքննությունների իրականացման ոլորտում մրցակցության արգելմանը, ինչով պայմանավորված սահմանափակվել է այլ սուբյեկտների կողմից համանման գործունեություն իրականացնելու հնարավորությունը:

## 3.4. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎՃԻՌՆԵՐԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



**Սեդա Ոսկանյան**

*Վարչական վարույթների և դատական ներկայացուցչության բաժնի պետ*

*«Վերջին տարիներին դատարանների կողմից ձեվակերպվել են Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայի զարգացման համար ուղենիշային մի շարք հիմնական եզրահանգումներ, որոնք հիմք են հանդիսանում Հանձնաժողովի կողմից իրականացվող վարույթներում իրավական հիմնավորվածության առավել բարձր չափանիշների սահմանման համար»:*

### ՀԱՐՈՒՑՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԹԻՎԸ

2019-2023 թթ.






2019 թվականից մինչև 2023 թվականն ընկած ժամանակահատվածում դատարանների կողմից Հանձնաժողովի որոշումների մասով կայացված վճիռների ավելի քան 73,5 տոկոսը եղել են հօգուտ Հանձնաժողովի, ինչը ևս մեկ անգամ վկայում է Հանձնաժողովի գործունեության արդյունավետության մասին:

2023 թվականը հատկանշական է նաև դատարանների կողմից մի շարք հարցերով սկզբունքային դիրքորոշումների արտահայտմամբ: Վերաքննիչ վարչական դատարանը կաթնամթերքի ոլորտին վերաբերող վճռի շրջանակներում կաթնային ճարպի փոխարինիչով մթերքների վերաբերյալ ձևավորել էր հետևյալ կարևոր մոտեցումները.

- «Պանիր» անվանումով ապրանքը չի կարող պարունակել բուսական յուղ.

Կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերքի սպառողական փաթեթվածքի վրա պետք է նշվի բուսական յուղերի առկայության մասին տեղեկատվություն.

- Արտադրողը կրում է ապրանքի մակնշման մեջ դրանում բուսական յուղի առկայության հանգամանքը պարտադիր

կերպով զետեղելու պարտականություն.

- Մթերքում բուսական յուղերի առկայության մասին տեղեկատվությունը պետք է զետեղվի փաթեթվածքի կամ պիտակի վրա հատուկ հատկացված տեղեկատվական դաշտում՝ այդ տեղեկատվական դաշտի գույնին հակադիր գույն ունեցող տառատեսակով.
- Մթերքը որպես պանիր մակնշելը և իրացնելն այն դեպքում, երբ դրանում առկա է բուսական յուղ ինքնուրույն բաղադրամաս, և «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի իմաստով վերջինս «պանրի տեխնոլոգիայով արտադրված՝ կաթնային ճարպի փոխարինիչով կաթ պարունակող մթերք» է, և ոչ թե պանիր, պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

**ՀՀ վարչական դատարանը առաքումների ոլորտի վերաբերյալ վճռի շրջանակներում առաքումների ժամկետների սահմանման և կիրառման առնչությամբ ձևավորել էր հետևյալ կարևոր մոտեցումները.**

- Առաքումների ժամկետներ սահմանելիս **«≈»** նշանի օգտագործումը տպավորություն է ստեղծում, որ «մոտավոր» տերմինը վերաբերում է առաքումների նշված ժամկետների միջև ընկած միջակայքին, ուստի առաքումների առավելագույն ժամկետը որևէ պարագայում չի կարող գերազանցել նշված միջակայքի առավելագույն թիվը.
- Տնտեսավարող սուբյեկտի կայքէջում հրապարակված «Ընդհանուր դրույթներ և պայմաններ» հատվածում «ընկերությունը ուշացումների համար պատասխանատվություն չի կրում» նշագրումը չի կարող հիմք հանդիսանալ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով նախատեսված անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվությունից խուսափելու համար.
- Տնտեսավարող սուբյեկտը երկարաժամկետ գործունեության ընթացքում պարբերաբար առաջացող խնդիրները (խոսքը չի գնում բացառիկ դեպքերի մասին) պարտավոր է հաշվի առնել առաքումների ժամկետային քաղաքականությունը որոշելիս.
- Առաքումներ իրականացնող սուբյեկտի գործունեության երաշխիքը հենց անորոշ թվով անձանց մոտ հետաքրքրություն առաջացնելն է (վերջիններիս եկամուտը կապված է հաճախորդների քանակից), իսկ հետաքրքրությունը կարող է առաջանալ հենց ցանկալի ապրանքի «գայթակղիչ» ժամկետներում առաքումը կազմակերպելու միջոցով, հետևաբար ծառայությունների մատուցման հարթակում՝ կայքում և բջջային հավելվածում ծառայությունների վերաբերյալ տեղեկությունը հանդիսանում է գովազդ.
- Տնտեսավարող սուբյեկտի կողմից առաքումների համար որոշակի միջակայքով ժամկետի սահմանման դեպքում առաքումները գործնականում սահմանված առավելագույն ժամկետի ուշացումով իրականացնելը հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցություն է:

# 3.5. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Լիլիթ Թովմասյան**
*Շուկաների վերլուծության բաժնի պետ*

*«Հանձնաժողովը, կարևորելով Հայաստանում ներդրումների աճը և բիզնեսի զարգացումը՝ այս տարվա ուսումնասիրությունների շրջանակնում դիտարկել էր փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորումը և էլեկտրաէներգետիկան, որը ազատականացումից հետո կարող է դառնալ նոր բիզնես գործունեության և ենթակառուցվածքների ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացման հեռանկարային ուղղություն»:*

Հանձնաժողովի առանձին լիազորություն է ոլորտային ուսումնասիրությունը. Հանձնաժողովը տարեկան ընտրում է 5 ապրանքային շուկա կամ ոլորտ և համապարփակ վերլուծություն է իրականացնում՝ պարզելու ոլորտի իրավական կարգավորման բացերը, հնարավոր մուտքի խոչընդոտները, ոլորտում մրցակցության մակարդակը, ինչպես նաև մշակելու բարձրացված խնդիրների լուծման ուղիներ:

Ոլորտային ուսումնասիրությունների շրջանակներում Հանձնաժողովի նպատակն է.

1. վերլուծել ոլորտում առկա իրավիճակը,
2. բացահայտել ոլորտում առկա մրցակցային իրավախախտումները,
3. ոլորտի քաղաքականությունը մշակող պետական մամնին ներկայացնել ոլորտի զարգացման առաջարկներ:

*Հանձնաժողովի կողմից իրականացված ոլորտային ուսումնասիրությունները և ներկայացրած առաջարկությունները*

| 2019 | | 2020 | | 2021 | | 2022 | | 2023 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Առաջարկ | | Առաջարկ | | Առաջարկ | | Առաջարկ | | Առաջարկ |
| Բենզին և դիզելային վառելիք | 5 | Հանք-արդյունաբերու-թյուն | 1 | Թռչնամիս | 1 | Էլեկտրոնային առևտուր | 1 | Էլեկտրա-էներգետիկա | 11 |
| Շաքարավազ | 2 | Ձու | 1 | Ախտորոշիչ ծառայություն-ներ | 1 | Մանկական կեր | 1 | ՓՄՁ ֆինանսավորում | 12 |
| Կարագ | 3 | Ցորեն և ալյուր | 1 | Կաթ և կաթնամթերք | 1 | Բուսական յուղ | 1 | Էլեկտրոնային հարթակներով փոխադրում | 7 |
| Սեղմված գազ | 1 | Դեղեր | 3 | Դեղեր | 2 | Բեռնա-փոխադրում | 3 | Ծխախոտ | 7 |
| Կոնյակ | 5 | Գովազդ | 4 | Առևտրային ցանցեր | 7 | Աջակցող միջոցներ | 5 | Պահնորդական ծառայու-թյուններ | 7 |

## 3.5.1 Էլեկտրաէներգետիկայի ոլորտ

### Ոլորտի ընտրություն

Վերջին տասնամյակներում աշխարհի շատ երկրներում էլեկտրաէներգիայի արդյունաբերությունը կենտրոնացված մոդելից վերափոխվել է ազատ մրցակցային մոդելի՝ հիմք դնելով էլեկտրաէներգիայի ոլորտի ազատականացման և էներգետիկ շուկաների ձևավորմանը: Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկան նույնպես 2022 թվականի փետրվարից սկսեց ազատականացվել է:

Հաշվի առնելով ազատականացումից հետո նորաստեղծ էլեկտրաէներգետիկական մրցակցային շուկայի գործարկումը, ինչպես նաև Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առաջարկությունը՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովն առաջին անգամ ոլորտում համալիր ուսումնասիրություն է իրականացրել:

### Ուսումնասիրության առարկան

Ուսումնասիրության արդյունքում դիտարկվել են հետևյալ ապրանքային շուկաները.

- «Էլեկտրաէներգիայի առաքում» ապրանքային շուկան որպես մեծածախ ձեռքբերման շուկա, որտեղ գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտներն են էլեկտրաէներգիայի մեծածախ ձեռք բերողները և մյուս կողմից էլեկտրաէներգիա արտադրող իրացնողները: **«Էլեկտրաէներգիայի առաքում» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը առաքված էլեկտրաէներգիայի ամբողջությունն է:**

- «Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների մատուցում» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը իր մեջ ներառում է էլեկտրաէներգիա հաղորդողի կողմից հաղորդման ծառայությունների մատուցման և դրանից բխող բոլոր գործառույթների ամբողջությունը:
- «Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայությունների մատուցում» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը իր մեջ ներառում է էլեկտրաէներգիա բաշխողի կողմից բաշխման ծառայությունների մատուցման և դրանից բխող բոլոր գործառույթների ամբողջությունը:

Էլեկտրաէներգիայի շրջանառության ոլորտում առանձնացված վերոնշյալ երեք ապրանքային շուկաների աշխարհագրական սահման է համարվում Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը՝ հաշվի առնելով ՀՀ ամբողջ տարածքում էլեկտրաէներգետիկական համակարգի հասանելիությունը, որի միջոցով իրականացվում է էլեկտրաէներգիայի առքուվաճառքի, հաղորդման, բաշխման և դրանցից բխող այլ գործառույթների իրականացումը:

### Ուսումնասիրության արդյունքները

Հանձնաժողովի կողմից ընդգծվել են իրավական կարգավորումների

այն դրույթները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են ազդեցություն ունենալ ոլորտի զարգացման հետագա մրցակցային իրավիճակի վրա: Հանձնաժողովի կողմից վեր հանված խնդիրներին տրվել են նաև դրանց լուծման առաջարկներ, որոնք ներկայացվել են լիազոր մարմիններին:

Շուկայի զարգացման հետ մեկտեղ մանրածախ հատվածը աստիճանաբար պետք է դրսևորվի բարձր մրցակցությամբ և արդյունավետությամբ: Շուկան դեռևս արդյունավետ չի գործում, որի պատճառներից է նաև այն, որ սպառողները ունեն որոշման կայացման համար բավարար տեղեկատվության պակաս կամ էլ ստանում են ոչ բավարար տեղեկատվություն: Դա ինքնին դժվարեցնում է տարբեր մատակարարների առաջարկների ու գների համեմատումը: Նույնիսկ սակագնային կոմպոնենտի հավասարության պայմաններում վերջնական գինը հաճախ պարունակում է մի քանի տարբեր գնային բաղադրիչներ, հավելյալ ծառայություններ և այլն, որոնց մասին սպառողը մեծամասամբ տեղեկացված չի լինում:

Որպես վերոնշյալ խնդրի լուծում առաջարկվում է.

- Արդեն գործող կարգավորումներում մտցնել հստակություն, կիրառել գնային իրազեկման ստանդարտ մոտեցումներ՝ պարտադիր նշելով գնագոյացման բոլոր բաղադրիչները և դրանց վրա ազդող գործոնները:
- Ստեղծել միասնական հարթակ որտեղ սպառողների համար հնարավորինս տեսանելի և մատչելի կլինեն միաժամանակ տարբեր մատակարարների առաջարկները:
- Հեշտացված և հասկանալի ներկայացնել այն գործողությունները և դրանց հերթականությունը, որոնք պետք է իրականացնի սպառողը կամ տնտեսավարողը ազատական շուկա մուտք գործելու պարագայում՝ միաժամանակ ներկայացնելով նաև վերջիններիս սպասվող իրավունքների և պարտականությունների շրջանակը:
- Ապահովել նաև Բաշխման և Հաղորդման ցանցերին միացման ընթացակարգերի պարզեցված և թափանցիկ ներկայացում, ինչը թույլ կտա սպառողին հասկանալու իր նկատմամբ որևէ խտրական, հակամրցակցային կամ մենաշնորհ դիրքի չարաշահում պարունակող գործողության բնույթը:
- Հնարավորության դեպքում տարանջատել Հաղորդման և Բաշխման ցանցերի գործունեությունը այլ գործունեություն իրականացնող ընկերություններից՝ հակամրցակցային վարքագծի կանխման տեսանկյունից: Շուկայի տարբեր մակարդակներում վերջիններիս ուղղահայաց ինտեգրումը կարող է խախտել մրցակցությունը չեզոքության բացակայության և խաչաձև սուբսիդավորման ռիսկերի պատճառով:

## 3.5.2 Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ֆինանսավորման ոլորտ

### Ոլորտի ընտրություն

Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների ֆինանսավորման ոլորտի ուսումնասիրության իրականացման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ ՓՄՁ սուբյեկտները 2022 թվականի ընթացքում ՀՀ-ում գործունեություն իրականացրած տնտեսավարող սուբյեկտների ընդհանուր թվաքանակում ունենալով շուրջ 53% մասնաբաժին, ապահովելով ընդհանուր իրացման շրջանառության շուրջ 33%-ը, պետբյուջե մուտքագրվող հարկային եկամուտների 25%-ը և ՀՀ աշխատաշուկայի 25%-ը, նշանակալի դերակատարություն ունեն ՀՆԱ-ի ձևավորման, զբաղվածության և հարկային մուտքերի ապահովման տեսանկյունից, ինչն էլ իր հերթին խթան է հանդիսանում տնտեսության կայուն զարգացման, միջազգային շուկաներում ՀՀ սուբյեկտների ներկայացվածության և մրցունակության բարձրացման համար: Միաժամանակ հաշվի են առնվել ՓՄՁ սուբյեկտների և վերջիններիս հետ առընչվող կառույցների կողմից Հանձնաժողովի հետ համագործակցության շրջանակում բարձրաձայնված, ՓՄՁ սուբյեկտների գործունեության ոլորտին վերաբերող խնդիրները:

### Ուսումնասիրության արդյունքները

Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից արձանագրվել են մի շարք խնդիրներ և ներկայացվել դրանց լուծմանն ուղղված առաջարկներ:

Մասնավորապես առաջարկվել են.

- ՓՄՁ սուբյեկտների դասակարգման հիմքում դրվող չափանիշների առավել արդյունավետ մեխանիզմների կիրառում,
- տվյալ տարում գործունեությունը սկսած տնտեսավարող սուբյեկտների ՓՄՁ սուբյեկտ դիտարկելու համար օրենսդրությամբ համապատասխան դրույթների նախատեսում,
- ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափանիշներում աստիճանական փոխկապակցվածության մեխանիզմների ներդնում,
- ՓՄՁ սուբյեկտներում պետական մարմինների մասնակցության չափի սահմանում,
- ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 377-Ն որոշմամբ հաստատված «Բանկերից համապարփակ տվյալների ընդունման» կարգի և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության» օրենքի դրույթների համապատասխանեցում,
- ՓՄՁ սուբյեկտներին աջակցության տրամադրման գործընթացում համապատասխան չափանիշների և շահառուների միասնական տվյալների շտեմարանի ներդնում:

## 3.5.3 Ծխախոտի արտադրանքի ոլորտ

### Ոլորտի ընտրություն

Հանձնաժողովի կողմից ծխախոտի արտադրանքի ոլորտում ուսումնասիրություն իրականացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ վերջին տարիներին ոլորտը կրել է էական փոփոխություններ, ընդ որում՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ օրենսդրական: Միաժամանակ, ծխախոտի արտադրությունը հանդիսանում է մշակող արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը՝ մշակող արդյունաբերությունում ունեցած տեսակարար կշռով (2022 թ.-ի տվյալներով մոտ 7,9%) զիջելով միայն սննդամթերքի և խմիչքի արտադրությանը: Բացի այդ, ծխախոտի արտադրանքը դասվում է սպառողների կողմից հիմնականում հայցվող 25 ապրանքատեսակների թվին:

### Ուսումնասիրության առարկան

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության շրջանակում դիտարկվել են սիգարետ, էլեկտրոնային ծխախոտ և տաքացվող ծխախոտ ապրանքատեսակները՝ ելնելով այն հանգամանքից, որ ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները մեծամասամբ վերաբերում են նշված ապրանքախմբերին:

Ուսումնասիրության շրջանակում հատկորոշվել են «Սիգարետ» և «Տաքացվող և էլեկտրոնային ծխախոտ» ապրանքային շուկաները:

**«Սիգարետ» ապրանքային շուկայի** ապրանքատեսակային սահման է հանդիսանում ֆիլտրով սիգարետի ողջ տեսականին, իսկ աշխարհագրական սահմանը ներառում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:

**«Տաքացվող և էլեկտրոնային ծխախոտ» ապրանքային շուկայի** ապրանքատեսակային սահմանը ներառում է տաքացվող և էլեկտրոնային ծխախոտի ողջ տեսականին (ներառյալ էլեկտրոնային հեղուկները, տաքացվող ծխախոտի գլանակները, դրանց օգտագործման համար նախատեսված սարքերը և առանձին մասերը), իսկ աշխարհագրական սահմանը ներառում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:

### Ուսումնասիրության արդյունքները

Ուսումնասիրությամբ Հանձնաժողովը պարզել էր, որ ի տարբերություն սիգարետների և էլեկտրոնային ծխախոտների՝ տաքացվող ծխախոտը չի ներառվում Հարկային օրենսգրքով սահմանվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում: Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են նաև «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի խախտման, մասնավորապես՝ էլեկտրոնային ծխախոտների հրապարակային ցուցադրման դեպքեր:

Բացահայտվել է նաև որ, տաքացվող ծխախոտային արտադրանքը դասա-

կարգվում է որպես ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչ, սակայն շարունակում է կարգավորվել ծխախոտային արտադրատեսակների տեխնիկական կանոնակարգով:

Կարևոր է նաև ընդգծել, որ թեև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով սահմանվում է ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների վաճառքի թույլտվության տրամադրման համայնքի ղեկավարի լիազորությունը, սակայն որևէ իրավական ակտով չի կարգավորվում թույլտվության տրամադրման գործընթացը:

Այս համատեքստում Հանձնաժողովը գտնում է, որ ոլորտում հավասար և բարեխիղճ մրցակցային պայմանների, ինչպես նաև հարկային վարչարարության պատշաճ իրականացման և ԵԱՏՄ գործող իրավական ակտերին համապատասխանության տեսանկյունից նպատակահարմար է տաքացվող ծխախոտը ևս ներառել պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկում:

## 3.5.4 Պահնորդական գործունեության ոլորտ

### Ոլորտի ընտրություն

Պահնորդական գործունեության ոլորտի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Հանձնաժողովի կողմից նախկինում կատարված վարչական վարույթների ժամանակ բացահայտված խնդիրները, ինչպես նաև Ոլորտում առկա հնարավոր խնդիրների առնչությամբ ստացված ազդակները:

### Ուսումնասիրության առարկան

Պահնորդական գործունեության ոլորտում հատկորոշվել է «Պահնորդական ծառայություններ» ապրանքային շուկան, որի ապրանքատեսակային սահմանը պահպանվող օբյեկտների պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովող գործողությունների ամբողջությունն է: Ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը ներառում է ՀՀ ողջ տարածքը:

### Ուսումնասիրության արդյունքները

Հանձնաժողովը ոլորտային ուսումնասիրության շրջանակներում պարզել էր, որ ոլորտը կարգավորող օրենսդրության տարբեր դրույթներով սահմանված են մի շարք պահանջներ, որոնք առնչվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից մեծ ծավալի փաստաթղթերի պահպանման և լիազոր մարմին ներկայացնելու հետ, ինչը կարող է առաջացնել ֆինանսական և տեխնիկական ծանրաբեռնվածություն: Պահանջներից են, օրինակ, որակավորված պահնորդների փոփոխության դեպքում համապատասխան փաստաթղթերի փաթեթը Ոստիկանություն ներկայացնելը:

Հանձնաժողովն առաջարկել է տնտեսավարող սուբյեկտների կողմից մեծաքանակ տեղեկատվության պահպանման խնդրի հետ կապված

Պետական եկամուտների կոմիտեի և պահնորդի որակավորում տրամադրող կրթական հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում լիազոր մարմնի կողմից ստեղծել պարբերաբար թարմացվող էլեկտրոնային շտեմարաններ, որտեղ կպահպանվեն և տեխնիկածրագրային միջոցներով կթարմացվեն տնտեսավարող սուբյեկտների և համապատասխան որակավորում ունեցող անձանց վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտ համապատասխան այլ տվյալները:

Տնտեսավարող սուբյեկտների կողմից պահնորդի (թիկնապահի) կյանքն ու առողջությունը չապահովագրելը հանդիսանում է մասնավոր պահնորդական գործունեության լիցենզիայի դադարեցման հիմքերից մեկը, սակայն անհնար է դառնում կյանքի ապահովագրության ապահովումը՝ ՀՀ ապահովագրական շուկայում այդ ծառայությունը չի մատուցվում: Դրա հետ կապված՝ Հանձնաժողովն առաջարկել է իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություն այնպես, որ անհրաժեշտ ապահովագրական ծառայությունները գործնականում հնարավոր լինի ձեռք բերել:

Պահնորդները պարտավոր են առնվազն 3 տարին մեկ անգամ անցնել վերապատրաստում և 2 տարին մեկ անգամ՝ ստուգում, ընդ որում՝ ֆինանսավորումն իրականացվում է տնտեսավարող սուբյեկտի կողմից, ինչը կարող է մեծ ֆինանսական բեռ հանդիսանալ վերջիններիս համար: Տնտեսավարող սուբյեկտների համար պահնորդների վերապատրաստման մասով ֆինանսապես ծանրաբեռնող հանգամանք չստեղծելու նպատակով, Հանձնաժողովն առաջարկել է սահմանել օրենսդրական պահանջներն այնպես, որ վերապատրաստումները պարտադիր բնույթ կրեն ոչ թե բոլոր պահնորդների, այլ միայն երկու տարին մեկ իրականացվող ստուգումները չհաղթահարածների համար:

Ոստիկանությունը ի թիվս այլ գործառույթների, պայմանագրային հիմունքներով իրականացնում է իրավաբանական և ֆիզիկական անձանց պատկանող օբյեկտների և գույքի պետական պահպանություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ոստիկանությունն իր կարգավիճակով պայմանավորված ունի մի շարք առավելություններ, հնարավոր է Ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների համար ստեղծվեն մրցակցության ոչ նպաստավոր պայմաններ:

Մասնավոր պահնորդական կազմակերպության լիցենզիայի գործողության դադարեցման հիմք է հանդիսանում նաև լիցենզիա ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, պահնորդական ծառայություններ չիրականացնելը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս ոլորտում գործունեություն իրականացնելու համար լիցենզիան տրամադրվում է **անժամկետ** հիմունքներով, և լիցենզիայի ստացման համար հայտ ներկայացնելիս հիմնական պայմանը հանդիսանում է որակավորված պահնորդ (թիկնապահ) ունենալու հանգամանքը՝ **Հանձնաժողովն առա-**

**ջարկել է դիտարկել նման ժամկետ չնախատեսելու կամ ավելի երկար ժամանակահատված սահմանելու նպատակահարմարությունը:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոլորտում գործունեություն ծավալելը լիցենզավորման ենթակա գործունեություն է, միաժամանակ **զենքի օգտագործմամբ պահնորդական ծառայություններ մատուցելու համար** տնտեսավարող սուբյեկտները պետք է ունենան համապատասխան թույլտվություններ, ուստի Հանձնաժողովն առաջարկել է ստեղծել հասանելի էլեկտրոնային առցանց շտեմարան, որտեղ պարբերաբար կթարմացվեն և կհամալրվեն ինչպես գործունեություն ծավալելու լիցենզիա ունեցող կազմակերպությունների տվյալները, այնպես էլ զենքի օգտագործմամբ պահնորդական ծառայություններ մատուցելու համապատասխան թույլտվություններ ունեցող կազմակերպությունների ցանկը: Սա կհանգեցնի նրան, որ պահնորդական ծառայություն ձեռք բերող սուբյեկտը, այդ թվում՝ պետական գնումների շրջանակներում, հասանելություն կունենա տեսնելու ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տվյալները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զենքի օգտագործմամբ պահնորդական ծառայությունների մատուցման ոլորտի նկատմամբ առկա են առանձին վերահսկողական մեխանիզմներ և օրենսդրական կարգավորումներ, Հանձնաժողովն առաջարկել է դիտարկել առանց զենքի օգտագործման պահնորդական ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների համար գործող պարտադիր կատարման ենթակա պահանջների նվազեցման կամ առանց զենքի օգտագործման պահնորդական ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների համար լիցենզավորման պահանջի վերացման հնարավորությունը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունը, Հանձնաժողովն առաջարկել է առանց զենքի օգտագործման պահնորդական ծառայությունների մատուցումը ներառել ծանուցման ենթակա գործունեության տեսակների ցանկում, ինչը հնարավորություն կտա տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ իրականացնել համապատասխան հսկողություն՝ միաժամանակ տնտեսավարող սուբյեկտների համար ապահովելով ավելի դյուրին ընթացակարգեր:



## 3.5.5 Էլեկտրոնային հարթակներով փոխադրման ծառայությունների մատուցման ոլորտ

### Ոլորտի ընտրություն

Համաձայն Տրանսպորտի միջազգային ֆորումի ուսումնասիրությունների ու հրապարակումների՝ ամբողջ աշխարհում նկատվում է տասքի ծառայությունների արագ ինտեգրում օնլայն հավելվածներին ու տեխնոլոգիաներին: Միջազգային գործակալությունների ուսումնասիրությունները փաստում են, որ 2023 թվականին աշխարհում հավելվածների և օնլայն հարթակների միջոցով մատուցվող տաքսի ծառայությունների ընդհանուր հասույթը կկազմի 154 միլիարդ դոլար՝ մինչև 2027 թվականը տարեկան աճելով միջինում 7,04 տոկոսով: Արդյունքում 2027 թվականին այս ոլորտի ծավալը աշխարհում կհասնի 202,2 միլիարդ դոլարի, իսկ նման հավելվածների և հարթակների օգտատերերի թիվը կհասնի 1,92 միլիարդի:

Համանման թվայնացման տենդենց առկա է նաև Հայաստանի Հանրապետությունում. թվային հարթակները զգալի ներկայացուցչություն ունեն ավանդական համարվող շուկաներում: Բացի այդ կարեվոր է ընդգծել, որ.

1. Հայաստանում էլեկտրոնային հարթակներով ուղևորափոխադրման ոլորտը չունի համապարփակ իրավական կարգավորում:
2. Հանդիսանում է բազմակողմ շուկա, ինչպիսինների՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների փորձը ցույց է տալիս այդ շուկաներում սպեցիֆիկ խնդիրների և ռիսկերի առկայություն:
3. Ոլորտի ուսումնասիրության մասին առաջարկով են հանդես եկել նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը և Ազգային Ժողովի պատգամավոր Ալխաս Ղազարյանը:

### Ուսումնասիրության առարկան

Հանձնաժողովը մրցակցային միջավայրը գնահատելու համար այս ոլորտում հատկորոշել է «Թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրման ծառայությունների պատվերների գրանցման, փոխանցման և ուղևորափոխադրման ծառայությունների կազմակերպման ծառայություն» ապրանքային շուկան, որը ներառում է էլեկտրոնային հարթակների առաջարկած բոլոր ուղևորափոխադրման ծառայությունների պատվերների գրանցման ու փոխանցման, ինչպես նաև ուղևորափոխադրումների ծառայությունների կազմակերպման ծառայությունը՝ բացառությամբ սահմանված ուղղություններով ու ժամկետներով համատեղ ուղևորափոխադրման ծառայության:

Հանձնաժողովը «Թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրման ծառայությունների պատվերների գրանցման, փոխանցման և ուղևորափոխադրման ծառայությունների կազմակերպման ծառայություն» ապրանքային

շուկայի համար որպես աշխարհագրական սահման է հատկորոշել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը:

## Ուսումնասիրության արդյունքները

Ավանդական տաքսի ծառայությունները զգալի անկում են գրանցում, իսկ հավելվածների և հարթակների միջոցով մատուցվող ծառայությունների շրջանակը շարունակաբար լայնանում է: Որպես արդյունք՝ տաքսու ներքաղաքային, ներմարզային և միջմարզային ուղևորափոխադրմամբ զբաղվող գրանցված 3162 կազմակերպություններից 2787 տնտեսավարող սուբյեկտ 2018-2023 թվականներին ոչ մի հարկատեսակով վճարումներ չի իրականացրել, հետևապես չի իրականացրել այս ոլորտում որևէ գործունեություն: Մնացած տնտեսավարող սուբյեկտների շրջանում վճարված բոլոր տեսակի հարկերը՝ շահութահարկ, եկամտային հարկ, ավելացված արժեքի հարկ և այլ հարկային մուտքեր, զգալի անկում են ապրել:

Այս պահին էլեկտրոնային հարթակներով փոխադրման ծառայությունները չեն ամրագրված որևէ իրավական ակտով և դուրս են պետական մարմինների վերահսկողությունից: Թեպետ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը մշակել և ներկայացրել է ոլորտի կարգավորման փաթեթ, այն սահմանումից և նման գործունեությունը ծանուցման ենթակա դարձնելուց բացի չի առաջարկում հարթակների կարգավորման հավելյալ մեխանիզմներ: Ավելին՝ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրման և թեթև մարդատար ավտոմոբիլներով ոչ կանոնավոր փոխադրման ձևակերպումները ունեն հատվող բովանդակություն, և հաշվի առնելով, որ դրանց համար մշակված են տարբեր պայմաններ, կարող են առաջանալ օրենքի կամայական մեկնաբանության, ինչի հիմքով սահմանված նորմերի շրջանցման, ինչպես նաև հնարավոր թյուրընկալման ռիսկեր:

Այս համատեքստում Հանձնաժողովն արձանագրել էր, որ ոլորտի իրավական կարգավորումը նախ և առաջ պահանջում է հիմնական հասկացությունների միանշանակ և լիարժեք սահմանում. առաջին հերթին անհրաժեշտ է սահմանել «էլեկտրոնային հարթակի» գաղափարը բոլոր տեսակի փոխադրումների համար՝ ինչից ելնելով առկա է ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրման և թեթև մարդատար ավտոմոբիլներով ոչ կանոնավոր փոխադրման ձևակերպումների ներդաշնակեցման, ինչպես նաև հետագայում՝ ոլորտի ամբողջական կարգավորման համատեքստում այս հասկացությունների միաժամանակյա օգտագործման անհրաժեշտության և նպատակահարմարության քննարկման անհրաժեշտություն:

Հայաստանի Հանրապետությունում ոլորտի ընդհանուր կարգավորումը կարելի է դիտարկել տրանսպորտային ոլորտի իրավական դաշտի լայնացմամբ,

որով, դիտարկելով Ռուսաստանի Դաշնությունում արդեն իրականացված բարեփոխումների փորձը, կսահմանվի հարթակի սեփականատիրոջ պատասխանատվության շրջանակը հարթակի միջոցով մատուցվող ծառայությունների համար, հարթակի աշխատանքի մեխանիզմն ու վարորդների և տաքսի ծառայություն մատուցող ընկերությունների փոխգործակցությունը նման հարթակների հետ:

Այս համատեքստում արդյունավետ կարող է լինել նաև հարթակների վերահսկողության համար վարորդների և ընկերությունների ռեեստրների ստեղծումը, ինչը կօգնի վերահսկել հարթակներում ծառայություն մատուցող վարորդների լիցենզավորված լինելու հանգամանքը և զգալիորեն կբարելավի ուղևորափոխադրման ծառայությունների որակը: Նման գործիքակազմի կիրառումը անհրաժեշտ է համատեղել հարթակների համար հավելյալ պարտավորությունների սահմանմամբ՝ կապված ռեեստրների համապատասխանության և վարորդների լիցենզավորված լինելու փաստի հետ:

«Թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրման ծառայությունների պատվերների գրանցման, փոխանցման և ուղևորափոխադրման ծառայությունների կազմակերպման ծառայություն» ապրանքային շուկայում կենտրոնացվածությունը շարունակում է աճել. գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտի մասնաբաժինը ավելացել է դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում «Թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրման ծառայությունների պատվերների գրանցման, փոխանցման և ուղևորափոխադրման ծառայությունների կազմակերպման ծառայություն» ապրանքային շուկայում գործող 4 տնտեսավարող սուբյեկտներից մեկը շուկայից դուրս է եկել, իսկ ծավալով ամենամեծ տնտեսավարող սուբյեկտը ավելի է ամրացրել իր դիրքը: Շուկայում գործող երեք ընկերությունն էլ չեն ստանձնում որևէ պատասխանատվություն հարթակում ներկայացված տեղեկատվության և մատուցվող ծառայությունների որակի համար:

Առաջին ընկերությունը հավաքագրված անձնական տեղեկատվությունը կարող է օգտագործել փոխկապակցված բոլոր ընկերություններում թե՛ նույն հարթակի ներսում, թե՛ դրանից դուրս: Երկրորդ ընկերությունը գաղտնիության քաղաքականությամբ սահմանում է, որ բացակայում են որևէ սահմանափակումներ անձնական տվյալների՝ երրորդ կողմերին փոխանցման հարցում: Միայն երրորդ ընկերությունը չի փոխանցում տվյալները երրորդ կողմի՝ բացառությամբ օրինական պահանջի:

Առաջին երկու ընկերությունները ունեն զգալի ցանցային էֆեկտ թե՛ ուղևորների, թե՛ վարորդների նկատմամբ, ինչի հաշվին ապահովում են հարթակի օգտատերերի կայուն աճ: Միևնույն ժամանակ երկուսի դեպքում էլ կատարվող պատվերների և պատվիրված երթերի համամասնությունը չի փոխվում: Ավելին երկրորդ ընկերության դեպքում այն

զգալիորեն նվազել է, ինչը հուշում է, որ հարթակում առաջարկի ծավալը ավելի արագ է մեծանում, քան պահանջարկը:

Այնուամենայնիվ, երկուսի դեպքում էլ արձանագրվել է ծառայությունների գնի աճ:

Գների վրա ազդեցության իմաստով բոլոր երեք ընկերությունների դեպքում հարթակի կողմից առաջարկվող գինը վերածվում է փաստացի գնի, քանզի այլ կողմերի ազդեցությունը կամ անհնար է, կամ տեխնիկապես բարդ իրագործելի: Մյուս կողմից, հիմք ընդունելով, որ գների վրա ազդում են համանման աղբյուր ունեցող արտաքին գործոններ՝ խնդրահարույց է այն հանգամանքը, որ տարբեր ուղեվորափոխադրման ծառայությունների գների փոփոխությունները ունեն տարատեսակ տենդենցներ:

Իրականացված մոնիթորինգը ևս մեկ անգամ հաստատում է, որ

**ա)** շուկայում առկա է եղել ավելի ցածր գնով առաջարկ, որը ներկայացված չի եղել ծավալով առաջատար ընկերությունների հարթակներում,

**բ)** երկու երթուղու գնային տարբերությունը նույն ժամանակահատվածում դիտարկման պայմաններում զգալիորեն տարբերվում է տարբեր հարթակներում, իսկ 2 ամսվա ընթացքում չփոփոխվող գնային դինամիկան, անկախ միջոցառումների, հանրային ակցիաների և եղանակի հանգամանքներից, էլ ավելի խնդրահարույց է դարձնում հարթակներում գնագոյացման մեխանիզմի հավաստիությունը:

Ոլորտի մրցակցային կարգավորումը բարելավելու համար կարելի է հետագա ուսումնասիրության առարկա դարձնել հավելյալ կարգավորումների մի քանի տարբերակների անհրաժեշտության և նպատակահարմարության հարցը: Հնարավոր հավելյալ կարգավորումները կարելի է ամրագրել հենց «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում՝ սահմանելով ինչպես ցանցային էֆեկտին, նման տնտեսավարող սուբյեկտների համար շուկայական իշխանության առկայությունը հավաստող հանգամանքներին վերաբերող լրացուցիչ կարգավորումներ, այնպես էլ նման տնտեսավարող սուբյեկտների համար լրացուցիչ պարտավորություններ: Նման կարգավորումը կարելի է իրականացնել նաև առանձին իրավական ակտի տարբերակով՝ «Թվային շուկաների մասին» օրենքի նմանությամբ. այս դեպքում անհրաժեշտություն չի լինի ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը և դիրքը դիտարկել օրենքի իմաստով գերիշխող դիրքի առկայության համատեքստում: Դա կդառնա հավելյալ գործիք Հանձնաժողովի համար, որը չի պահանջի լրացուցիչ մեծածավալ վարչարարություն և կօգնի ոլորտում համակարգային նշանակություն ունեցող հարթակների գործունեությունն ավելի արդյունավետ վերահսկել:

Որպես թվային շուկաներում մրցակցային միջավայրի զարգացման հավելյալ միջոց կարելի է դիտարկել թվային շուկայում գործող տնտեսավարող սուբյեկտների համար կոմպլաենսի հատուկ տարբերակի մշակումը, որը

իր մեջ կամրագրի վերոնկարագրյալ պարտավորությունները՝ կապված անձնական տվյալների պահպանման և օգտագործման, ինչպես նաև շուկայում լրացուցիչ խոչընդոտների չառաջացման և մոնիթորինգային մեխանիզմների ամրագրման հետ:

Հարթակներում ուղևորափոխադրման հիմնական տեսակների մասին տեղեկատվությունը լիարժեքորեն չի ներկայացված, իսկ որոշ դեպքերում տարբերվում է վարորդների համար նախատեսված հարթակում զետեղված տեղեկատվությունից, ինչը կարող է խոչընդոտել սպառողների կողմից լիարժեք և համակողմանի ուսումնասիրության հիման վրա ռացիոնալ որոշման կայացմանը: Մյուս կողմից դա կարող է խոչընդոտել հարթակների կողմից հրապարակված գաղտնիության քաղաքականությանը, քանի որ հարթակները կարող են օգտագործել հավաքագրված տեղեկատվությունը ոչ միայն ուղևորափոխադրման ծառայության մատուցման շրջանակներում, այլ նաև հարթակի հետ փոխկապակցված ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների մատուցման, ինչպես նաև նոր էլեկտրոնային պրոդուկտների մշակման համար: Շուկայում գործող հարթակներից մեկի դեպքում էլ առկա չէ որևէ սահմանափակում հավաքագրված տեղեկատվության օգտագործման համար:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրել էր, որ թե՛ հարթակում ներկայացված, թե՛ սպառողներից հավաքագրված տեղեկատվության համար պետք է լինեն հստակ սահմանված կանոններ, որոնք մի կողմից թույլ կտան սպառողներին հիմնավորված որոշումներ կայացնել, մյուս կողմից արդյունավետորեն կպաշտպանեն նրանց հարթակների կողմից իրենց մասին հավաքագրված տեղեկատվության օգտագործման չարաշահումներից:

# 3.6. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Սոնա Խաչատրյան**

*Իրավական ապահովման բաժնի պետ*

*«2023 թվականը օրենսդրական բարեփոխումների իմաստով կարևոր էր առևտրային ցանցերի և գյուղմթերքի մատակարարումների ոլորտներում կարգավորումների մասով. արդեն ընդունված կարգավորումները պարտավորեցնում են առևտրային ցանցերին և գյուղատնտեսական մթերք ձեռքբերողներին հստակ ժամկետներում կատարել մատակարարների վճարումները, ինչը զգալիորեն կնվազեցնի փոքր ու միջին բիզնեսի ռիսկերը սեփական գործունեության պլանավորման հարցում»:*

2023 թվականը օրենսդրական փոփոխությունների իմաստով նշանավորվել է առևտրային ցանցերի և մատակարարների միջև հարաբերությունների, ինչպես նաև գյուղմթերքի մատակարարումների մասով հստակ կանոնների սահմանմամբ. Հանձնաժողովը մշակել էր «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որն ընդունվել է Ազգային ժողովի կողմից:

Առևտրային ցանցերի և մատակարարների հարաբերությունների իմաստով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով այլևս սահմանված են այդ հարաբերություններին վերաբերող հըստակ պահանջներ: Առևտրային ցանցերն այսուհետ պարտավոր են լինելու ունենալ պաշտոնական կայք, որտեղ պետք է ներկայացված լինեն.

1. հավանական մատակարարի ապրանքի ընտրության նվազագույն պահանջները և սկզբունքները,
2. առևտրային ցանցի կողմից իրացման ենթակա ապրանքատեսակների ցանկը
3. առևտրային ցանցում ապրանքի ցուցադրման պայմանները,
4. մատակարարման հարաբերությունների դադարեցման հիմքերը:

Օրենսդրական փոփոխություններով ամրագրվել է, որ առևտրային ցանցերը պետք է ունենան մատակարարի ապրանքի ընտրության հրապարակված նվազագույն պահանջներ և սկզբունքներ: Նվազագույն պահանջները և սկզբունքները կարող են սահմանվել ըստ ապրանքատեսակների՝ պայմանով, որ մատակարարի համար ընկալելի լինի տվյալ պահանջի կամ սկզբունքի վերաբերելիությունը կոնկրետ

ապրանքատեսակին: Հստակեցվել են նաև հնարավոր մատակարարների առաջարկների դիտարկման պայմանները:

Նոր փոփոխություններով նախատեսվել են նաև ապրանքների ցուցադրման պայմաններն առևտրային ցանցում, այդ թվում՝ ապրանքների գովազդման, ակցիաների իրականացման, արտոնությունների սահմանման կամ ապրանքների առաջխաղացմանն ուղղված այլ միջոցառումների իրականացման պայմանները և կարգը: Կարևոր է ընդգծել, որ այսուհետ ապրանքի ցուցադրման հետ կապված հարաբերությունները պետք է կարգավորվեն միայն գրավոր պայմանագրով, որը կարող է լինել նաև մատակարարման պայմանագրի մաս:

Ոչ պակաս կարևոր կարգավորում է նաև մատակարարման դիմաց վճարումների ժամկետների սահմանումը. այսուհետ առևտրային ցանցը մատակարարին վճարումը պետք է կատարի սննդամթերքի համար՝ օրենքով և պայմանագրով սահմանված կարգով մատակարարված ապրանքի ընդունման և մատակարարի կողմից հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման պահից ոչ ուշ, քան 30, իսկ ոչ պարենային ապրանքների համար՝ ոչ ուշ, քան 60 օրվա ընթացքում: Կողմերի գրավոր համաձայնությամբ կարող են սահմանվել ավելի սեղմ ժամկետներ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով էլ սահմանվել են հավելյալ վերահսկողական մեխանիզմներ առևտրային ցանցերի համար. վերոնշյալ վճարումների կատարման 3 միլիոն կամ ավելի դրամի չափով 90 օրացուցային օր կամ ավելի ժամկետով կետանցնայսուհետ Հանձնաժողովի կողմից դիտարկվելու է՝ որպես բանակցային ուժեղ դիրքի չարաշահում, որի դեպքում Հանձնաժողովը կարող է նշանակել տուգանք տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև տասը տոկոսի չափով:

| ԻՐԱՑՆՈՂԻ ՀԱՍՈՒՅԹԻ ՉԱՓ (դրամ) | ՁԵՌՔԲԵՐՈՂԻ ՀԱՍՈՒՅԹԻ ՉԱՓ (դրամ) |
|---|---|
| < 25 մլն. | > 25 մլն. |
| > 25 մլն.<br>< 100 մլն. | > 100 մլն. |
| > 100 մլն.<br>< 500 մլն. | > 500 մլն. |
| > 500 մլն.<br>< 1,5 մլրդ. | > 1,5 մլրդ. |
| > 1,5 մլրդ.<br>< 3,5 մլրդ. | > 3,5 մլրդ. |

Զուգահեռաբար՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով սահմանվել է նոր կարգավորում գյուղատնտեսական մթերքների մատակարարման ուղղությամբ:

Այսուհետ համապատասխան հասույթի շեմերն անցնող ձեռքբերողների կողմից

գյուղատնտեսական արտադրանքի դիմաց վճարումները 30 օրացուցային օրվա ընթացքում չկատարելը Հանձնաժողովի կողմից կարող է համարվել բանակցային ուժեղ դիրքի չարաշահում: Իրավաբանական անձ հանդիսացող մատակարարի դեպքում ձեռքբերողի և մատակարարի հասույթները պետք է համապատասխանեն աղյուսակում բերված չափերին:

Միևնույն ժամանակ ձեռք բերող տնտեսավարող սուբյեկտի հասույթի չափն առնվազն տասն անգամ պետք է գերազանցի իրացնող տնտեսավարող սուբյեկտի հասույթի չափը:

Գյուղատնտեսական արտադրանք իրացնող ֆիզիկական անձանցից գյուղատնտեսական արտադրանքի ձեռքբերման դեպքում ձեռք բերողի բանակցային ուժեղ դիրք ունենալու փաստի հաստատման համար իրացնող ֆիզիկական անձանց հասույթի չափ չի դիտարկվելու, իսկ ձեռք բերողի դեպքում անհրաժեշտ հասույթի չափ է համարվելու վերջին ֆինանսական տարում կամ գյուղատնտեսական արտադրանքի գնման պայմանագրի կնքման պահին նախորդող 12 ամսում **25 000 000** դրամը գերազանցող հասույթի չափը:

# 3.7. ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՎԵՐՋԻՆ 5 ՏԱՐՈՒՄ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հետևողական գործունեությունը տարբեր ապրանքային շուկաներում բերել է դրանցում կառուցվածքային և բովանդակային վերափոխումների՝ ձևավորելով ավելի մրցակցային և արդյունավետ ապրանքային շուկաներ:




**Բենզինի և դիզելային վառելիքի** իրացման շուկաներում վերջին **հինգ տարիների ընթացքում** տեղի են ունեցել զգալի փոփոխություններ:

Եթե 2018 թվականին երկու ոլորտներում էլ հիմնական մասնակից կարելի էր համարել **երեք ընկերության**, ապա այլ տնտեսավարող սուբյեկտների՝ այս շուկաներ մուտք գործելու և ոլորտում գործողների ծավալների աճի հաշվին արդեն 2023 թվականին ոլորտում հիմնական դերակատարում ունեն հինգ տնտեսավարող սուբյեկտներ:




Միևնույն ժամանակ, երկու շուկաներում էլ արձանագրվել է կենտրոնացվածության մակարդակի անկում. բենզինի շուկայում առաջին մասնակցի մասնաբաժինը կրճատվել է **10 տոկոսով**, իսկ դիզելային վառելիքի շուկայում գործող առաջին երկու խոշոր ընկերությունների մասնաբաժինը՝ **15 տոկոսով**:




**Արևածաղկի ձեթի** իրացման շուկայում 2018-2023 թվականներին նույնպես տեղի են ունեցել զգալի վերափոխումներ. բացի այն, որ շուկայում գործող տըն-

տեսավարողների թիվն **աճել է մոտ 50** տոկոսով, արևածաղկի ձեթի շուկա նոր ընկերությունների մուտքի և ավելի ակտիվ մրցակցության շնորհիվ ամբողջովին փոխվել է հիմնական ներմուծողների կառուցվածքը:

Համանման գործընթացներ են արձանագրվել նաև **սառեցված հավի** իրացման շուկայում. ինչպես արևածաղկի ձեթի դեպքում, այստեղ նույնպես շուկայում մասնակիցների թիվը աճել է **50 տոկոսով**:




Դրան զուգահեռ նվազել է նաև շուկայի կենտրոնացվածության մակարդակը. ամենախոշոր երկու մասնակիցների մասնաբաժինը **պակասել է 10 տոկոսով**:




Ինչ վերաբերում է **կարագի** իրացման շուկային, ապա ինչպես արդեն արձանագրվել էր, Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթների արդյունքում առևտրային ցանցերում վերջիններիս հետ փոխկապակցված և չփոխկապակցված ընկերությունների համար ապահովվել էին հավասար ներկայացվածության պայմաններ:




Այս իրավիճակը բերել է այն արդյունքին, որ շուկայում գործող երկրորդ տնտեսավարողի իրացման ծավալային աճը շուկայում կազմել է ավելի քան **56 տոկոս**, իսկ մասնաբաժինն **աճել է 3 տոկոսով**: Զուգահեռաբար շուկայում ամենախոշոր տնտեսավարող սուբյեկտի ծավալը նվազել է **5 տոկոսով**:

# 4 ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

# 4.1. ԱՆԲԱՐԵԽԻՂԾ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

**Զարուհի Մելքումյան**

*Տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության վերահսկողության բաժնի պետ*

*«Տնտեսավարող սուբյեկտների միջև անբարեխիղճ մրցակցության վերահսկողության լավարկման համատեքստում Հանձնաժողովը 2023 թվականին կառուցվածքային փոփոխությունների շրջանակներում առանձնացրեց տնտեսավարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության վերահսկողության բաժին, ինչը ուղղված էր տարանջատելու սպառողների նկատմամբ և տնտեսավարող սուբյեկտների միջև անբարեխիղճ մրցակցության դրսևորումները»:*

Անբարեխիղճ մրցակցության նկատմամբ վերահսկողությունը հանդիսանում է Հանձնաժողովի գործունեության անկյունաքարերից մեկը, ինչով պայմանավորված մշտապես լրջագույն քայլեր են իրականացվում ինչպես անբարեխիղճ մրցակցություն հանդիսացող իրավախախտումների բացահայտման, այնպես էլ դրանց կանխարգելման ուղղությամբ:

Նշվածով պայմանանավորված վերջին տարիներին կրկնակի աճել են թե՛ անբարեխիղճ մրցակցության առկայության հիմքով վարույթների, և թե՛ տուգանքների նշանակման դեպքերի քանակները:

Ցանկացած գործողություն, որն առաջացնում է **շփոթություն այլ տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների նկատմամբ**, համարվում է անբարեխիղճ մրցակցություն:

Շփոթությունը կարող է դրսևորվել **ապրանքային կամ սպասարկման նշանին կամ ֆիրմային անվանմանը նույնական կամ շփոթելու աստիճանի նման** ապրանքային կամ սպասարկման նշանի կամ ֆիրմային անվանման օգտագործմամբ, այլ տնտեսավարող սուբյեկտի **ապրանքի, դրա արտաքին տեսքի կամ փաթեթավորման, գունային համակցության կամ այլ ոչ ֆունկցիոնալ բնութագրերի կրկնօրինակմամբ** կամ նմանակմամբ և այլն:

**Ավելի մանրամասն՝** [այստեղ]




Վերջին տարիներին շփոթության առաջացման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով իրականացված ուսումնասիրությունների շրջանակում հատկապես հատկանշական էին օղու շրջանառության ոլորտում իրականացված ուսումնասիրությունները:

Մասնավորապես՝ 2019-2021 թթ.-ին իրականացված ուսումնասիրությունների հիման վրա հարուցվել են **8 վարույթներ**, որոնց արդյունքում տնտեսավարող սուբյեկտները ենթարկվել են պատասխանատվության և նշանակված տուգանքների ընդհանուր չափը կազմել է **51 585 780** դրամ: Հատկանշական է այն հանգամանքը, որ նշված գործողություններն ունեցել են կանխարգելիչ ազդեցություն օղու շրջանառության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների համար, քանի որ արդյունքում 2022 և 2023 թվականներին օղու շրջանառության ոլորտում շփոթության հիմքով **խախտումներ չեն արձանագրվել:**

# 4.2. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

**Մերուժան Խաչատրյան**

*Սպառողների շահերի պաշտպանության բաժնի պետ*

*«Հանձնաժողովը 2023 թվականին ընդլայնեց սպառողների շահերի պաշտպանության շրջանակը՝ ձևավորելով առանձին սփորաբաժանում և դառնալով միջազգային մասնագիտացված կառույցի անդամ: Հայաստանում սպառողների շահերի պաշտպանության ինստիտուտի վերափոխումը շարունակելու է լինել Հանձնաժողովի հետագա գործունեության հիմնական առաջնահերթություններից մեկը»*

Հանձնաժողովի կողմից 2019-2023 թվականներին հասարակության մոլորեցման դրսևորմամբ անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով մի շարք ոլորտներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են բազմաթիվ իրավախախտումներ, որոնք վնասել են նաև սպառողների շահերը:

Այդպիսի ոլորտներից էր կաթնամթերքի շրջանառության ոլորտը: Դեռևս 2020 թվականին Հանձնաժողովի կողմից կաթնամթերքի շրջանառության ոլորտում իրականացվել է լայնածավալ և համակողմանի ուսումնասիրություն, որի արդյունքների համաձայն՝ արտադրողները մակնշման միջոցով փորձել էին սպառողների մոտ ստեղծել թյուր տպավորություն առ այն, որ վերջիններս կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերքների (օրինակ՝ կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերք պատրաստված թթվասերի տեխնոլոգիայով) փոխարեն ձեռք են բերում կաթնային մթերքներ (օրինակ՝ թթվասեր):

Նշված վարքագիծը Հանձնաժողովի կողմից որակվել էր

Ցանկացած գործողություն, որը **մոլորեցնում է հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների վերաբերյալ,** համարվում է անբարեխիղճ մրցակցություն:

Հասարակության մոլորեցում է համարվում՝ **ապրանքների որակն անհիմն չափազանցնելը**, որակի, քանակի կամ այլ բնութագրերի վերաբերյալ համապատասխան **տեղեկատվություն չհիշատակելը** և այլն:

Հասարակության մոլորեցումը կարող է **վնասել սպառողներին**՝ ստիպելով նրանց ապրանքների ընտրության գործընթացում որոշումներ կայացնել՝ հիմնվելով կեղծ կամ թերի տեղեկատվության վրա:

**Ավելի մանրամասն՝**
**այստեղ**

որպես հասարակության մոլորեցման դրսևորմամբ՝ անբարեխիղճ մրցակցության գործողություններ:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի հետևողականորեն ուսումնասիրել է նշված ոլորտը, ինչը ունեցել է իր դրական ազդեցությունը: Մասնավորապես՝ առկա վիճակագրությունը վկայում է, որ Հանձնաժողովի կողմից իրականացված արդյունավետ վարչարարության արդյունքում կաթնամթերքի շրջանառության ոլորտում արձանագրված խախտումների քանակը տարեցտարի նվազում է: Ընդ որում՝ հատկանշական է, որ 2023 թվականին իրականացված ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովի կողմից ստուգված թվով 18 ապրանքներից միայն մեկ ապրանքի մասով է հայտնաբերվել խախտման դեպք:



Հանձնաժողովը 2021 թ.-ին ուսումնասիրել է 61 տնտեսավարող սուբյեկտների կողմից արտադրված և ներկրված 176 անվանում ապրանքներ, որոնց տուփերի կամ փաթեթվածքների վրա մակնշված են «օրգանական» կամ «էկոլոգիական», «էկոլոգիապես մաքուր», «բիոլոգիական» տերմինների կամ դրանց «էկո», «բիո» կամ կրճատ այլ ձևերի առանձին կամ հարադիր բառերը:

որ այդ ապրանքներն օրգանական գյուղատնտեսության վարման կանոններին համապատասխան սերտիֆիկացված օրգանական գյուղատնտեսական արտադրանքներ են:

Հանձնաժողովի կողմից իրականացված հաջորդ միջոցառումը շշալցված չգազավորված խմելու ջրի շրջանառության ոլորտի ուսումնասիրությունն էր:




Շատ դեպքերում նման բառերով մակնշումը Հանձնաժողովը որակել է հասարակության մոլորեցման դրդսևորմամբ անբարեխիղճ մրցակցություն, քանի որ տնտեսավարող սուբյեկտները փորձել են սպառողների մոտ թյուր տպավորություն ստեղծել (ապակողմնորոշել),

Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել էր «աղբյուրի ջուր» և «բնական խմելու ջուր» մակնշումներով շշալցված չգազավորված ջրերի արտադրությամբ և իրացմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների գործունեությունը, որի արդյունքում պարզվել էր, որ մի շարք

տնտեսավարող սուբյեկտներ արտադրել և իրացրել են «աղբյուրի ջուր» և «բնական խմելու ջուր» մակնշումներով շշալցված ոչ գազավորված ջրեր այն դեպքում, երբ այդ ապրանքները ԵԱՏՄ կանոնակարգի իմաստով չեն հանդիսանում «աղբյուրի ջուր» և «բնական խմելու ջուր», այն է՝ չունեն աղբյուրի ծագում և (կամ) արտադրության որևէ փուլում մշակվել են քլորի պատրաստուկներով:

կանոնակարգերի պահանջներին, ինչպես նաև երշիկեղենի բաղադրությունների մեջ օգտագործված բաղադրիչների համապատասխանությունը պիտակների և/ կամ փաթեթավորման թաղանթների վրա մակնշված բաղադրիչներին: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են մի շարք խնդիրներ, որոնցից էին օրինակ՝ երշիկեղենի մսի շրջանառության և արտադրված երշիկեղենի հումքի մեջ

Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև երշիկեղենի շրջանառության ոլորտում: Ուսումնասիրության նպատակն է եղել բացահայտել պիտակների և/կամ փաթեթավորման թաղանթների մակնշումների համապատասխանությունը տեխնիկական

ներառված բաղադրիչների վերաբերյալ տեղեկություններում մսի ծավալների անհամապատասխանությունը, մասնավորապես՝ երշիկեղենի արտադրության մեջ օգտագործված մսի ծավալները չեն համապատասխանել ըստ բաղադրիչների հաշվարկված մսի ծավալներին,

երշիկեղենի փաթեթվածքի մակնշման անհամապատասխանությունը և այլն:

Վերոնշյալ խնդիրները Հանձնաժողովը որակել է հասարակության մոլորեցմամբ անբարեխիղճ մրցակցության դրսևորում:




Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ինտերնետ շահումով խաղեր իրականացնող ընկերությունների կողմից իրականացված մի շարք ակցիաներ: Վարույթների շրջանակներում պարզ է դարձել, որ ակցիաների առնչությամբ իրականացված գովազդներում ընկերությունները տեղեկատվությունը ներկայացրել են այնպես, որ առաջացել է ապակողմնորոշման՝ թյուր տպավորության ստեղծման հնարավորություն, ակցիաների շրջանակներում գործել են մի շարք էական պայմաններ, որոնք կամ որոնց գոյության և հասանելիության աղբյուրի մասին տեղեկատվությունը գովազդներում չեն նշվել՝ դրանց վերաբերյալ սպառողին ամբողջական պատկերացում կազմելու հնարավորություն չտալով:

Հանձնաժողովի կողմից իրականացված մյուս ուսումնասիրությունը վերաբերում էր առաքման ծառայությունների մատուցման ոլորտին: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ընկերություններն իրենց պաշտոնական կայքերում հրապարակել են տարբեր երկրներից տարբեր եղանակներով (օդային, ծովային, վերգետնյա) ապրանքներ ՀՀ առաքելու վերաբերյալ ժամկետներ, մինչդեռ պարբերաբար չեն ապահովել այդ ժամկետների պահպանումը՝ միաժամանակ չվերանայելով դրանք և հրապարակված տեղեկատվությունը չհամապատասխանեցնելով կանխատեսելի դարձած վարքագծին:

Հանձնաժողովն իրականացրել է նաև զեղչերի և այլ ակցիաների հետ կապված հարաբերությունների առնչությամբ օրենսդրական փոփոխություններ և ուսումնասիրություններ: Դրանց ընթացքում պարզ է դարձել, որ չեն պահպանվել ակցիայի մասին իրազեկմանը ներկայացվող պահանջները:

Մասնավորապես՝ ակցիայի մասին սպառողներին իրազեկելու եղանակները չեն պարունակել ակցիայի էության հակիրճ նկարագրությունը, ակցիայի ենթակա

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵԼ Է

Առաքման ծառայությունների մատուցման ոլորտը

**11** վարույթ է հարուցվել

**8** տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց է կիրառվել

Տուգանքը կազմել է՝

**89 853 063**
ՀՀ դրամ

ապրանքների և ծառայության հստակ շրջանակը կամ դրա հասանելիության աղբյուրը, ակցիայի իրականացման ժամանակահատվածը՝ մեկնարկի և ավարտի օրերը, ապրանքի կամ ծառայության գնի տոկոսային նվազեցումը չի կատարվել ակցիայի մեկնարկի պահին նախորդող մեկ ամսվա ընթացքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման միջին գնից, ակցիայի հայտարարված զեղչի ամենաբարձր տոկոսը չի տարածվել ակցիայի մեկնարկի պահին առկա ապրանքների առնվազն մեկ հինգերորդի վրա, ակցիայի պայմանների վերաբերյալ հրապարակման բովանդակության ամենամեծ և ամենափոքր տառաչափերի տարբերությունը երկու անգամից ավել է եղել և այլն:

Սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից 2023 թվականի կարեվորագույն իրադարձություններից էր Հանձնաժողովի՝ Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցի (ICPEN) գործընկեր դառնալը: Համաշխարհային նման հարթակին մասնակցությունը բացառիկ նշանակություն կունենա Հայաստանի Հանրապետությունում սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից՝ ոլորտի միջազգային լավագույն փորձի փոխանակման և անդամ երկրների հետ արդյունավետ փոխգործակցության զարգացման հնարավորություններ ստեղծելով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԵԼ Է

**43** տնտեսվարող սուբյեկտի

**98** Ակցիա

**38** վարույթ է հարուցվել (1-ը՝ ընթացիկ)

**37** տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ պատասխանատվության միջոց է կիրառվել

Տուգանքը կազմել է՝

**136 093 938**
ՀՀ դրամ

# 5 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

# 5.1. Հանձնաժողովի կառուցվածքի բարեփոխումները

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

### Առկա էին

- Համակենտրոնացումների գնահատում
- Գերիշխող դիրքի չարաշահումներ
- Հակամրցակցային համաձայնություններ
- Անբարեխիղճ մրցակցություն
- Պետական գնումների վերահսկողություն

### Ավելացել են

**2019**

- Շուկաների օժանդակություն
- Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ
- Պետական օժանդակություն
- Ռազմավարության մշակում

**2023**

- Սպառողների շահերի պաշտպանություն

2019 թվականից սկսած կատարվել են մի շարք բարեփոխումներ՝ ուղղված Հանձնաժողովի կառուցվածքի վերափոխմանը: Բարեփոխումների նպատակն էր բարձրացնել Հանձնաժողովի ներքին գործընթացների արդյունավետությունը: Այդ իմաստով 2023 թվականի կարևորագույն փոփոխությունն էր սպառողների շահերի պաշտպանության համար պատասխանատու առանձին ստորաբաժանման ձևավորումը, ինչով Հանձնաժողովը թևակոխեց սպառողների պաշտպանության նոր շրջափուլ՝ ընդլայնելով և հստակեցնելով իր լիազորությունների շրջանակը այս ուղղությամբ:

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՒՆԻ 86 ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ

- 61 Քաղաքացիական ծառայողներ
- 11 Հայեցողական պաշտոններ
- 7 Ինքնավար պաշտոններ
- 7 Ընդհանուր մասնագիտություն ունեցողներ և տեխնիկական սպասարկում իրականացնողներ

10 Միացել են

11 Հեռացել են

65% Իգական

35% Արական

## Կառուցվածքային ստորաբաժանումներում փաստացի զբաղեցրած ղեկավար պաշտոններ

**8** Կին **4** Տղամարդ

Մասնագիտական ստորաբաժանումներ

**5** Կին **0** Տղամարդ

Աջակցող ստորաբաժանումներ

## Աշխատակիցները ըստ տարիքային խմբերի

- 31% Մինչև 29 տ.
- 26% 30-39 տ.
- 26% 40-49 տ.
- 17% 50-65 տ.

### Կրթություն




- Գիտությունների թեկնածու
- Մագիստրոս
- Բակալավր

### Մասնագիտություն




- Տնտեսագետ
- Իրավագետ
- Այլ

### Հանձնաժողովում աշխատում են՝




- մինչև 1 տարի
- 2-5 տարի
- 11-15 տարի
- 6-10 տարի
- 15 և ավել տարի

## 5.2. Հանձնաժողովի մեթոդաբանական բազայի ամրապնդում

### 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՄՇԱԿՎԱԾ ՆՈՐ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔԱՆԱԿ

**18** Նոր կարգ՝ կապված տուգանքների չափի որոշման, ապրանքային շուկաների հատկորոշման և այլ լիազորությունների հետ

**6** Նոր ուղեցույց՝ կապված չհիմնավորված գների գնահատման, հակամենաշնորհային կոմպլաենսի և այլ լիազորությունների հետ

**1** Նոր ձեռնարկ՝ կապված ոլորտային ուսումնասիրությունների իրականացման հետ

Ընդհանուր առմամբ՝ Հանձնաժողովի կողմից մշակված մեթոդական փաստաթղթերն ունեն երկու հիմնական նպատակ: Առաջին հերթին՝ այդ փաստաթղթերը ուղղված են բարելավելու Հանձնաժողովի աշխատանքի արդյունավետությունը: Մյուս կողմից այդպիսի փաստաթղթերի հրապարակումը բարձրացնում է Հանձնաժողովի գործունեության թափանցիկությունը և օգնում է տնտեսավարող սուբյեկտներին, սպառողներին ու հանրության լայն շրջանակին ավելի հստակ հասկանալ՝ ինչ գործիքներով և մեթոդներով է Հանձնաժողովն իրացնում իր լիազորությունները:

2023 թվականին Հանձնաժողովը երկու կարևոր մեթոդական փաստաթուղթ է հրապարակել: Դրանցից առաջինը վերաբերում է Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցի ընտրության և տուգանքի հաշվարկման մեթոդաբանությանը, որով հստակեցվել են տարբեր ծանրության խախտումների համար թե՛ տուգանքների հաշվարկման կարգը, թե՛ մեղմացնող ու ծանրացնող հանգնամանքների ազդեցության չափը: Մյուս կարևոր փաստաթուղթը «Ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանների որոշման վերաբերյալ» ուղեցույցն էր, որը նկարագրում է ապրանքային շուկայի հատկորոշման մեթոդների ու գործիքների ընտրության և օգտագործման գործընթացը, ինչպես նաև դրանց կիրառման առանձնահատկությունները:

## 5.3. Հանձնաժողովի գործընթացների թվայնացում

Հանձնաժողովը ներդրել է նոր էլեկտրոնային e-compete համակարգը, որը Հանձնաժողովի բազում գործողությունների լիարժեք թվայնացման շնորհիվ զգալիորեն բարձրացրել է Հանձնաժողովի արդյունավետությունը: Առաջին հերթին e-compete-ը Հանձնաժողովի գործերի կառավարման բարեփոխված ներքին համակարգ է, որում առկա են աշխատակիցներին անհրաժեշտ բոլոր էլեկտրոնային գործիքները: Այն հագեցած է տվյալների հսկայածավալ շտեմարաններով, որոնք պարունակում են Հանձնաժողովի գործունեության 20 տարիներին վերաբերող բոլոր գործերի թվայնացված և արխիվացված տարբերակները: Միևնույն ժամանակ ՊԵԿ, Կադաստրի կոմիտեի, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության և Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տեղեկատվական բազաների հետ փոխգործելիության արդյունքում տվյալների ինքնաշխատ ստացումը զգալիորեն արագացրել է նաև Հանձնաժողովի կողմից անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման գործընթացը. տեղեկատվության պահանջի վերաբերյալ գրությունների քանակը 2023 թվականին կրճատվել է ավելի քան 90 %-ով:

Կարևոր է նաև նշել, որ այս համակարգը տրամադրում է նաև արտաքին օգտատերերի հետ էլեկտրոնային թղթակցության (e-filing) հնարավորություններ, ինչը ենթադրում է համակարգում անձնական էջի գրանցում և Հանձնաժողովի հետ հաղորդակցություն էլեկտրոնային ձևաթղթերի լրացման միջոցով, ինչի արդյունքում 2023 թվականին տնտեսավարող սուբյեկտների և ֆիզիկական անձանց հետ թղթակցության մոտ 10 %-ը իրականացվել է առցանց ձևաչափով:

Պետական մարմինների հետ աշխատանքում թվայնացումը նույնպես զգալիորեն հեշտացրել է Հանձնաժողովի գործունեությունը. e-compete համակարգի միջոցով պետական օժանդակության մասին տեղեկատվության ներկայացման հնարավորությունը զգալիորեն հեշտացնում է նաև գործընկեր պետական մարմինների կողմից այս գործառույթի իրականացումը:

Հասարակության տարբեր խմբերի հետ աշխատանքի և Հանձնաժողովի գործունեության թափանցիկության և մատչելիության իմաստով կարևոր էր նաև e-compete համակարգին զուգահեռ նոր ինտերակտիվ կայքի գործարկումը, որը պարունակում է ամբողջական տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության բոլոր ուղղությունների, ընդունած որոշումների և եզրակացությունների մասին, ինչպես նաև թույլ է տալիս արագ ու հեշտ հաղորդակցվել Հանձնաժողովի հետ՝ մուտք գործելով անձնական էջ անմիջապես կայքի միջոցով: Առանձին ուշադրության է արժանի նաև կայքում առկա գների մոնիթորինգի բաժինը, որտեղ կայքի յուրաքանչյուր այցելու կարող է ծանոթանալ խոշոր առևտրային օբյեկտներում սոցիալական կարևորություն ունեցող շուրջ 500 ապրանքների գներին, որոնք հրապարակվում են ամենօրյա ռեժիմով:

# 5.4. Կրթական ու գիտական համագործակցություն

Հանձնաժողովը մարդկային ռեսուրսների ներգրավման և զարգացման համատեքստում փորձում է համալսարանների հետ համագործակցությամբ կառուցել կադրերի ներգրավման ամբողջական համակարգ: Առաջին փուլում ուսանողները հնարավորություն են ունենում մասնակցելու Հանձնաժողովի նիստերին, ինչը թույլ է տալիս վերջիններիս ծանոթանալու թե՛ Հանձնաժողովի լիազորություններին, թե՛ գործիքակազմին:




Դրանից հետո, Հանձնաժողովն ապահովում է ուսանողների ուղիղ ներգրավվածությունը Հանձնաժողովի գործառույթներում՝ որպես փորձնակ կամ ուսնակ: Ուսանողները ձեռք են բերում նոր հմտություններ և հնարավորություն են ունենում գործնականում կիրառելու համալսարանում ստացված գիտելիքները:

Այս գործընթացի արդյունքում Հանձնաժողովը կարողանում է համալրվել արդեն լիարժեք տեղեկացված և Հանձնաժողովում փորձառություն ունեցող աշխատակիցներով, ինչը թույլ է տալիս զգալիորեն ավելի արագ ապահովել նոր աշխատակիցների լիարժեք ներգրավվածությունը Հանձնաժողովի գործերում:

Հանձնաժողովը թե՛ կրթության, թե՛ համալսարանների գիտական ներուժի ներգրավման հարցերով հնարավորինս սերտացրել է իր հարաբերությունները համալսարանների հետ: 2023 թ.-ին Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը և Երևանի պետական համալսարանը համագործակցության հուշագիր են կնքել, որը ուղղված է լինելու Հանձնաժողովում ԵՊՀ ուսանողների պրակտիկայի կազմակերպմանը, համատեղ հետազոտությունների իրականացմանը, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ սեմինարների, կլոր-սեղան քննարկումների անցկացմանը և մի շարք այլ հարցերի: Համանման հուշագրեր արդեն առկա էին Արդարադատության ակադեմիայի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Հայաստանում ֆրանսիական համալսարանի հետ:

## 5.5. Մրցակցության շահերի պաշտպանություն և հանրային իրազեկման միջոցառումներ

2023 թվականին Հանձնաժողովը շարունակել է իրականացնել պրոակտիվ հանրային իրազեկման աշխատանքներ՝ հիմնվելով բաց, թափանցիկ, հաշվետու և հրապարակային գործելաոճի ապահովման սկզբունքի վրա: Այս ժամանակահատվածում պատրաստվել և տարածվել են ընդհանուր թվով շուրջ 100 մամուլի հաղորդագրություններ, կազմակերպվել են մամուլի ասուլիսներ, ճեպազրույցներ, փոդքաստներ, իրազեկման սեմինարներ, աշխատաժողովներ գործարար համայնքի համար, նախաձեռնվել է նոր հաղորդում մրցակցության պաշտպանության թեմաների իրազեկման նպատակով և այլն:

2023 թվականի հոկտեմբերից Հանձնաժողովը Գործարար ալիքի հետ համատեղ նախաձեռնել է «Խաղի կանոնները» նախագիծը, որի շրջանակում շաբաթական պարբերականությամբ եթեր են հեռարձակվել Հանձնաժողովի աշխատակիցների հետ ռադիոհարցազրույցներ տնտեսական մրցակցությանն առնչվող առանցքային թեմաների վերաբերյալ: Նախագծի հիմնական նպատակն է լայն հանրությանն իրազեկել մրցակցության օգուտների և կարևորության մասին, հնարավորինս մատչելի ներկայացնել մրցակցության հիմնական հասկացությունները:

«Արմենպրես» լրատվական գործակալության հետ համագործակցությամբ նախաձեռնվել է ռադիոփոդքաստ 5 ապրանքային շուկաներում Հանձնաժողովի իրականացրած ուսումնասիրությունների լուսաբանման նպատակով, որի շրջանակում ուսումնասիրությունն իրականացրած աշխատակիցները ներկայացրել են կատարված աշխատանքները, շուկաներում արձանագրված խնդիրներն ու դրանց լուծման ճանապարհները:

Հանձնաժողովի աջակցությամբ 2023 թվականի նոյեմբերի 2-ին Երևանում կազմակերպվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման բլոկի հանդիպումը գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումը նպատակ ուներ իրազեկել գործարարներին ԵԱՏՄ անդրսահմանային շուկաներում արդար մրցակցության ապահովման և պետական գնումների ոլորտում առկա կարգավորումների մասին և պատասխանել տնտեսավարողներին հետաքրքրող հարցերին: Հանդիպմանը մասնակցել են ՄՊՀ նախագահ Գեղամ Գևորգյանը, ԵՏՀ մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամ (նախարար) Բախիտ Սուլթանովը, ԵՏՀ այլ պաշտոնյաներ, գործարար համայնքի ավելի քան 30 ներկայացուցիչներ:

2023 թվականի դեկտեմբերի 21-ին

Հանձնաժողովի և Ամերիկայի առևտրի պալատի համագործակցությամբ կազմակերպվել է «Մրցակցային մշակույթի զարգացումը Հայաստանում» խորագրով միջոցառում գործարար համայնքի ներկայացուցիչների համար: Միջոցառումը նպատակ ուներ ներկայացնել ՀՀ-ում գործունեություն ծավալող հակամենաշնորհային կոմպլաենս ներդրած ընկերությունների փորձը, դրա կարևորությունն ու օգուտները:

Հանձնաժողովը շարունակել է ակտիվորեն լուսաբանել զեղչերի և այլ ակցիաների օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև դրանց ուժի մեջ մտնելուց հետո Հանձնաժողովի կողմից իրականացված վերահսկողական միջոցառումների արդյունքները: Այդ թվում՝ կազմակերպվել են հանդիպումներ տնտեսավարողների և ՀԿ-ների համար, հարցազրույցներ, հեռուստառեպորտաժներ, հրապարակումներ թեմայի առնչությամբ հաճախ տրվող հարցերի շրջանակում, ինֆոգրաֆիկա բացահայտված իրավախախտումների և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ, մամուլի ասուլիս Սև ուրբաթին ընդառաջ և այլն:

## 5.6. Միջազգային համագործակցություն

**Անահիտ Միքայելյան**
*Միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ*

*«2023 թվականը առանձնահատուկ էր Հանձնաժողովի միջազգային հարթակներում ներկայացվածության տեսանկյունից: Առանձին հիշատակման է արժանի Հանձնաժողովի կողմից Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանցի անդամ դառնալը: Միանալով ավելի քան 70 անդամ երկիր ունեցող այս կառույցին՝ Հանձնաժողովը ստեղծում է բազմաթիվ երկրների հետ հետագա համագործակցության լայն հնարավորություններ»:*

**Միջազգային համագործակցության արդյունքները 2019-2023 թվականներին**

**5** ԵՐԿՐՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԵԼ ԵՆ **ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԵՐ**

**11** միջազգային ծրագիր է իրականացվել

**$ 1 092 300**
է կազմել միջազգային ֆինանսավորման ծավալը

2019-2023 թվականներին Հանձնաժողովը փորձել է հնարավորինս մեծացնել իր ներգրավվածությունը մրցակցության հարցերով միջազգային կառույցներում՝ զուգահեռաբար ամրապնդելով կապերն առանձին երկրների հետ: 2023 թվականն առանձնացել է այս համատեքստում կազմակերպված համաժողովների, սեմինարների քանակով և համագործակցության ուղղությունների բազմազանությամբ:

## ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

***Հանձնաժողովը համագործակցում է հետևյալ միջազգային կառույցների հետ.***

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհուրդ (այդ թվում՝ գովազդի կոորդինացիոն խորհուրդ)

Եվրասիական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ) (Հակամենաշնորհային կարգավորման դեպարտամենտ, Մրցակցային քաղաքականության և պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում քաղաքականության դեպարտամենտ

Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) առևտրի և զարգացման հարցերով համաժողով (UNCTAD)

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոն (OECD-RCC)

ԵՄ Էներգետիկ համայնքի անդամ պետությունների մրցակցային մարմինների միջև մրցակցության ցանց

Մրցակցության միջազգային ցանց (ICN)

Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց (ICPEN)

## ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023 թվականից Հանձնաժողովը միացել է նաև Մրցակցության միջազգային ցանցի Մրցակցային մարմինների ընթացակարգերի միասնական համակարգին (Framework on Competition Agency Procedures/ CAP): Սա համագործակցության լայն հնարավորություններով նոր հարթակ է Մրցակցության միջազգային ցանցի անդամ երկրների մրցակցային մարմինների համար՝ միասնական սկզբունքների կիրառմամբ առավելագույնի հասցնելու մրցակցային իրավիճակի կանխատեսելիությունն ու ազդեցությունը՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով տարբեր իրավական ռեժիմներում և կիրարկման համակարգերում գործող մասնակիցների վարչական բեռը:

Հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի սկզբին դարձել է «Սպառողների պաշտ-պանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց» (International Consumer Protection and Enforcement Network/ICPEN) կազմակերպության գործընկեր:

«Սպառողների պաշտպանության և օրենսդրության կիրարկման միջազգային ցանց» կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) միջազգային հարթակ է, որը կոչված է հաղթահարել սպառողների պաշտպանության ոլորտի մարտահրավերներն ու խնդիրները ողջ աշխարհում: Կազմակերպության հիմնական գործառույթներից են սպառողների պաշտպանության կիրարկման հարցերի շուրջ համագործակցությունը, սպառողների պաշտպանության ոլորտում զարգացման միտումների, ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև սպառողների պաշտպանության օրենսդրության և լիազորությունների կիրարկման վերաբերյալ լավագույն փորձի փոխանակումը: Կազմակերպության անդամ են սպառողների պաշտպանության ոլորտում իրավասու շուրջ 70 կազմակերպություններ, այդ թվում՝ մրցակցային մարմիններ:

Համաշխարհային հարթակին մասնակցությունը հնարավորություն կընձեռի անմիջականորեն մասնակցել սպառողների պաշտպանության ոլորտում ծագած խնդիրների լուծման համաշխարհային գործընթացին, ինչպես նաև միջազգային հանրությանն իրազեկել Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող զարգացումների մասին:

## ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

### «Միջազգային մրցակցության ցանց» կազմակերպության տարեկան համաժողով Բարսելոնայում

Հանձնաժողովի նախագահը մասնակցել է Մրցակցության միջազգային ցանցի 22-րդ տարեկան համաժողովին, որի շրջանակներում հանդես է եկել «Արհեստական բանականությունը և մրցակցությունը» թեմայով ելույթով:

## Միացյալ ազգերի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) մրցակցության օրենքի և քաղաքականության միջկառավարական խմբի 21-րդ նիստ ժնևում

Հանձնաժողովի նախագահը Ժնևում որպես փոխնախագահ մասնակցել է Միացյալ ազգերի առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) մրցակցության օրենքի և քաղաքականության միջկառավարական խմբի 21-րդ նիստին: Վերոնշյալ նիստում Հայաստանի մրցակցային մարմինն այս տարի առանձնահատուկ դերակատարում է ունեցել. առաջին անգամ Հանձնաժողովի նախագահին ընտրվել է նիստի փոխնախագահ և ղեկավարել անդամ պետությունների մրցակցային մարմինների ղեկավարների պանելային քննարկումները:

Հանձնաժողովը հանդես է եկել առաջարկություններով և նախաձեռնություններով, որոնք լիարժեք աջակցություն են ստացել գործընկերների կողմից: Մասնավորապես, կարևորելով սահմանափակող գործողությունների նկատմամբ արդյունավետ վերահսկողության, օրենսդրության կատարելագործման ուղղությամբ մրցակցային մարմինների համատեղ նախաձեռնությունների դերը միջազգային և տարածաշրջանային մակարդակներում՝ Հանձնաժողովի նախագահն աջակցություն է հայտնել անդրսահմանային հակամրցակցային համաձայնությունների աշխատանքային խմբի գործունեության երկարաձգման նախաձեռնությանը: Հանձնաժողովը վերոնշյալ աշխատանքային խմբի անդամ է հանդիսանում 2020 թվականից:

Հանձնաժողովի նախաձեռնությամբ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին հնարավորություն է ընձեռվել UNCTAD-ի հարթակում աշխարհի տարածաշրջանային կազմակերպությունների հետ հանդիպում անցկացնել:

### Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցության (OECD) հարցերով 22-րդ համաշխարհային համաժողով Փարիզում

Հանձնաժողովի նախագահը մասնակցել է Փարիզում կայացած Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) մրցակցության հարցերով 22-րդ համաշխարհային համաժողովին, որի շրջանակում ներկայացրել է հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ գործերում տնտեսական ապացույցների կիրառման Հայաստանի մրցակցային մարմնի փորձը:

### Մրցակցային մարմինների ղեկավարների ամենամյա գագաթնաժողով և Ամերիկայի իրավաբանների ասոցիացիայի 71-րդ գարնանային հանդիպում Վաշինգթոնում

Հանձնաժողովի նախագահը Վաշինգտոնում մասնակցել է մրցակցային մարմինների ղեկավարների ամենամյա գագաթնաժողովին և Ամերիկայի իրավաբանների ասոցիացիայի 71-րդ գարնանային հանդիպմանը: Գագաթնաժողովը կազմակերպվում է ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի և Առևտրի դաշնային հանձնաժողովի կողմից՝ մեկտեղելով աշխարհի տարբեր երկրների մրցակցային մարմինների ղեկավարներին՝ օրենսդրության կիրարկման առաջնահերթություններին և դրանց արդյունավետ կառավարման ռազմավարություններին առնչվող հարցերի քննարկման օրակարգով:

Ամերիկայի իրավաբանների ասոցիացիայի հանդիպումը նվիրված էր մրցակցության, սպառողների պաշտպանության և տվյալների պաշտպանության հարցերին, որին մասնակցություն են ունեցել պետական պաշտոնյաներ, տնտեսագետներ, դատավորներ, իրավապաշտպաններ, գիտնականներ: Հանդիպման շրջանակում Հանձնաժողովի նախագահը մասնակցել է մրցակցային մարմինների ղեկավարների հետ անցկացրած փոդքասթին:

### ԱՊՀ մասնակից պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի 55-րդ և վերջինիս ներքո գործող հակամենաշնորհային օրենսդրության խախտումների համատեղ ուսումնասիրության շտաբի 41-րդ նիստեր Երևանում

2023 թվականի նոյեմբերի 2-3-ը Երևանում տեղի են ունեցել ԱՊՀ մասնակից պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի 55-րդ և վերջինիս ներքո գործող հակամենաշնորհային օրենսդրության խախտումների համատեղ ուսումնասիրության շտաբի 41-րդ նիստերը, որոնց մասնակցել են Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի

Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության, Ուզբեկստանի Հանրապետության մրցակցային մարմինների ղեկավարներ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ԱՊՀ գործադիր կոմիտեի, Եվրասիական Ալյանսի ներկայացուցիչներ:

Շտաբի նիստին քննարկվել են մրցակցությանը և հակամենաշնորհային քաղաքականությանն առնչվող մի շարք օրակարգային հարցեր: Մասնավորապես նիստում հաստատվել են անբարեխիղճ մրցակցության օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի, մտավոր սեփականության, օբյեկտների նկատմամբ հակամենաշնորհային օրենսդրության կիրառման, սոցիալական նշանակության ապրանքների առանձին շուկաներում գործունեության արդյունքների վերաբերյալ զեկույցները, ինչպես նաև քննարկվել են սակագնային կարգավորումների և հակամենաշնորհային օրենսդրության խախտումների կանխարգելման վերաբերյալ զեկույցները:

## ԵԱՏՄ անդամ-պետությունների իրավասու մարմինների ղեկավարների և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) մակարդակով «5+1» ձևաչափով անցկացվող խորհրդակցություններ

Հանձնաժողովի նախագահ Գեղամ Գևորգյանը 2023 թվականի փետրվարին Մոսկվայում մասնակցել է ԵԱՏՄ անդամ պետությունների իրավասու մարմինների ղեկավարների և ԵՏՀ մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի) «5+1» ձևաչափով հերթական հանդիպմանը, որի ընթացքում ԵԱՏՄ գործընկերներին է ներկայացրել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի e-Compete թվային հարթակը՝ անդրադառնալով դրա ֆունկցիոնալ հնարավորություններին:

Նոյեմբերի 3-ին Երևանում տեղի է ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մրցակցության և հակամենաշնորհային կարգավորման հարցերով կոլեգիայի անդամի (նախարարի)

մակարդակով անցկացվող «5+1» ձևաչափով նիստը, որի շրջանակնե-րում ՄՊՀ անդամ Շուշան Սարգսյանը հանդես է եկել «Մրցակցության պաշտպանության ոլորտում արդիական հարցերի վերաբերյալ ընդհանուր մոտեցումների ձևավորման» մասին զեկույցով:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

### Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) հետ «Աջակցություն Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին» տեխնիկական համագործակցության ծրագիր

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Համաշխարհային բանկի համատեղ ջանքերով, ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Ծրագրի շրջանակում 2023 թվականին մշակվել են Միաձուլումների գնահատման ուղեցույցը և Մրցակցության շահերի պաշտպանության ռազմավարությունը, Միջազգային փորձագետների հետ իրականացվել է «Էլեկտրոնային հարթակներով փոխադրման ծառայությունների մատուցման ոլորտի վերաբերյալ» ուսումնասիրությունը:

Ծրագրի շրջանակում 2023 թվականի հուլիսի 14-ին տեղի է ունեցել «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի շահերի պաշտպանության ռազմավարությունը» խորագրով աշխատաժողով, որը կազմակերպվել էր մրցակցային քաղաքականության հարցերում մասնագիտացված «Լեար» իտալական տնտեսական խորհրդատվական ընկերության հետ համատեղ:

### «Համաշխարհային բանկի խումբ – ԵՄ գործընկերության առաջարկ. 2017-2020 թվականներին Հայաստանին միասնական աջակցության շրջանակ. տնտեսական կառավարում» ծրագիր

Ծրագրի շրջանակում տեղի է ունեցել «Պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն» և «Պետական մարմինների հակամրցակցային գործողություններ» թեմաներով վերապատրաստման դասընթացներ (աշխատաժողովներ), որոնց շրջանակներում վերապատրաստվել է 30 աշխատակից: Աշխատաժողովներն անցկացվել են հիպոթետիկ գործերի քննարկման ձևաչափով, որի ընթացքում ՄՊՀ աշխատակիցներն ուսումնասիրել են խորհրդատուների ներկայացրած հնարավոր հակամրցակցային վարքագծի վերաբերյալ դեպքը:

### ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի Առևտրային օրենքի զարգացման ծրագիր (CLDP)

Ծրագրի շրջանակում 2023 թվականի հունիսի 22-23-ը կայացել է «Մրցակցությունը Հայաստանի թվային շուկաներում. կարգավորում և կիրարկում» թեմայով աշխատաժողով, որին մասնակցել է Հանձնաժողովի 35

աշխատակից: ՄՊՀ ներկայացուցիչներն աշխատաժողովի ընթացքում ներկայացրել են թվային ոլորտներում իրականացված ուսումնասիրությունները: Ծրագրի փորձագետները խոսել են ԱՄՆ և Եվրամիության թվային շուկաներում իրավակիրառ փորձի և օրենսդրական կարգավորումների մասին: Քննարկվել են թվային շուկաներում մրցակցային իրավախախտումների պրակտիկ դեպքերի օրինակներ:

## Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) Համակենտրոնացումների գնահատման ուղենիշնե

2023 թվականին Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (OECD) բավարարել է Հայաստանի Հանրապետության դիմումը Համակենտրոնացումների գնահատման ուղենիշներին միանալու վերաբերյալ: Այսպիսով՝ կազմակերպությունը հաստատել է, որ համակենտրոնացումներին առնչվող ՀՀ համապատասխան օրենսդրական կարգավորումները, կիրակումն ու քաղաքականությունը համապատասխանում են OECD-ի սահմանած ուղենիշներին:

Հանձնաժողովը, միանալով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության խորհրդի համակենտրոնացումների գնահատման ուղենիշներին, պատրաստակամություն է հայտնում հավատարիմ մնալ այդ սկզբունքներին, շարունակաբար կատարելագործել գործող օրենքներն ու կանոնակարգերը՝ միջազգային լավագույն փորձին համահունչ:

## Սթենֆորդի համալսարանի «Հակամենաշնորհային օրենսդրություն» ծրագիր

Հանձնաժողովը շարունակել է համագործակցությունը Սթենֆորդի համալսարանի հետ «Հակամենաշնորհային օրենսդրություն» ծրագրի շրջանակում:

Հրապարակվել է «Մրցակցային մարմինների կողմից հակամենաշնորհային թվային գործիքակազմի ներդրումը» ամենամյա 2-րդ զեկույցը՝ https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=4476321, որը պատրաստվել է «Սթենֆորդ հակամենաշնորհային թվայնացում» ծրագրի շրջանակում 26 մրցակցային մարմինների, այդ թվում՝ Հանձնաժողովի հետ համատեղ:

Զեկույցում ներկայացված են Հանձնաժողովի կողմից 2022 թվականին գործարկված նոր էլեկտրոնային e-compete համակարգի առանձնահատկությունները և դրանց միջոցով հնարավոր մրցակցային իրավախախտումները վեր հանելու գործիքակազմերը:

Հանձնաժողովի կողմից կիրառվող էլեկտրոնային գործիքակազմի մասին անդրադարձ եղել է նաև «Մրցակցային մարմինների կողմից հակամենաշնորհային թվային գործիքակազմի ներդրումը» ամենամյա 1-ին զեկույցում՝ https://papers.ssrn.com/

sol3/papers.cfm?abstract_id=4142225, որը ներառվել է հակամենաշնորհների թեմայով 2022 թվականին ամենաշատ ընթերցված 10 հրապարակումների շարքում:

## ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և Հյուսիսային Մակեդոնիայի մրցակցության պաշտպանության հանձնաժողովի միջև (առաջին նկար) և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և Ալբանիայի մրցակցային մարմնի միջև կնքվել են) մրցակցության օրենսդրության կիրարկման և մրցակցային քաղաքականության ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրեր:

# 6 ԱՊԱԳԱՅԻՆ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# 6. ԱՊԱԳԱՅԻՆ ՄԻՏՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Մրցակցային միջավայրի զարգացում

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի համար մրցակցային միջավայրի զարգացման իմաստով առաջնային է լինելու **խոշոր և փոքր ձեռնարկությունների համար ստեղծված բիզնես միջավայրի հավասարակշռման** հարցը: Առկա մրցակցային օրենսդրության և 2023 թվականին բանակցային ուժեղ դիրքի գաղափարի ընդլայնման շրջանակներում Հանձնաժողովը շարունակելու է անհավասար դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների հարաբերությունների կարգավորումնավելի լայն՝ **պայմանագրային առավելությունների** հասկացության ներքո՝ ապահովելով դրա համար անհրաժեշտ իրավական դաշտ և կիրարկման գործիքակազմ:

Պետության կողմից տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի խաթարման կանխարգելումը նույնպես լինելու է Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում, ինչի հաշվառմամբ աշխատանքներ են տարվելու **պետական օժանդակության ինստիտուտի կատարելագործման** գծով:

Թվայնացման տենդենցի արագացմանը զուգահեռ Հանձնաժողովը շարունակելու է ավելի խորը և համապարփակ **կարգավորումներ մշակել թվային հարթակների ոլորտներում՝** նվազեցնելու թվային շուկաների զարգացումից առաջացող հնարավոր ռիսկներն ու բացասական հետևանքները:

Զուգահեռաբար տնտեսավարող սուբյեկտների հետ աշխատանքներում Հանձնաժողովի առաջնահերթությունն է մնում իրազեկման և համագործակցության լայն հնարավորությունների ստեղծումը՝ հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրման և Հանձնաժողովի աշխատանքի լուսաբանման իմաստով, ինչը կօգնի տնտեսավարող սուբյեկտներին դառնալ **ավելի կրթված և գիտակից, հետևապես ավելի մրցունակ** իրենց գործունեության ոլորտներում:

## Սպառողների շահերի պաշտպանություն

Սպառողների շահերի պաշտպանության հարցում 2023 թվականին իրականացված քայլերի ամրապնդմանն են ուղղված լինելու Հանձնաժողովի հետագա գործողությունները: Այդ շրջանակներում է լինելու սպառողների շահերի պաշտպանության **իրավական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի ամբողջական մշակումն ու կայացումը,** ինչպես նաև տարբեր ոլորտներում համապատասխան **ստանդարտների ներդրումը:**

Ոչ պակաս կարևոր են լինելու նաև

Հանձնաժողովի կողմից իրազեկման միջոցառումների իրականացումը և սպառողների համար նախատեսված կրթական նյութերի մշակումը, ինչը կօգնի սպառողներին դառնալ **ավելի կրթված և գիտակից, հետևապես ավելի պաշտպանված** իրենց ամենօրյա կյանքում:

### Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

Աշխատանքների շարունակական լավարկման և արդյունավետության բարձրացման շրջանակներում Հանձնաժողովը դիտարկում է ներդնել նոր թվային գործիքներ, որոնք ուղղված են լինելու մասնավորապես պետական **գնումների ոլորտում մրցակցային իրավախախտումների բացահայտմանը,** ինչը զգալիորեն կնպաստի պետական գնումներում հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և հնարավոր ռիսկերի վերհանման գործում արդյունավետության և օպերատիվության բարձրացմանը:

Բացի այդ, Հանձնաժողովի հետ կապը սպառողների համար ավելի դյուրին և արագ դարձնելու նպատակով նախատեսվում է **թվայնացնել նաև սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված գործիքակազմը,** ինչը, ի թիվս այլնի, ներառում է Հանձնաժողովի պաշտոնական կայքում սպառողների համար առավել հարմար, մատչելի և ինտերակտիվ առանձին մոդուլի մշակում:

Այս ամենին զուգահեռ Հանձնաժողովը շարունակելու է խորացնել համագործակցությունը Հայաստանում գործող համալսարանների և գիտական կենտրոնների հետ՝ մշակելով և իրագործելով մրցակցության պաշտպանությանը վերաբերող ակադեմիական ծրագրեր և ավելի ակտիվորեն ներգրավելով համալսարաններին մարդկային ռեսուրսների համալրման գործում, ինչը կօգնի ունենալ **ավելի կրթված և գիտակից, հետևապես ավելի արդյունավետ** աշխատակիցներ իր լիազորությունների իրացման գործում:

# 7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# 7.1. Ֆինանսական հաշվետվություն

**2023թ. 1034-11001 «Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակում վերահսկողություն» միջոցառում**

| N | Անվանումը | Տնտեսագիտական հոդված | Ճշտված պլան | Փաստացի դրամարկղային ծախս | Բյուջեի կատարման % |
|---|---|---|---|---|---|
| | Ընթացիկ ծախսեր | | 594,829.3 | 586,622.2 | 98.62 |
| 1 | Աշխատողների աշատավարձ և հավելավճար | **4111** | 435,207.2 | 434,863.4 | 99.9 |
| 2 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարումներ | **4112** | 45,925.2 | 45,925.2 | 100.0 |
| 3 | Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում | **4113** | 21,735.8 | 21,735.8 | 100.0 |
| 4 | Էներգետիկ ծառայություններ | **4212** | 7,588.2 | 7,329.6 | 96.6 |
| 5 | Կապի ծառայություններ | **4214** | 3,450.0 | 2,912.3 | 84.4 |
| 6 | Ապահովագրական ծախսեր | **4215** | 188.0 | 172.0 | 91.5 |
| 7 | Գույքի և սարքավորումների վարձակալություն | **4216** | 44,527.8 | 44,527.8 | 100.0 |
| 8 | Ներքին գործուղումներ | **4221** | 86.4 | 65.0 | 75.2 |
| 9 | Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | **4222** | 10,448.0 | 10,370.2 | 99.3 |
| 10 | Համակարգչային ծառայություններ | **4232** | 6,029.0 | 1,839.0 | 30.5 |
| 11 | Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | **4233** | 453.3 | 355.5 | 78.4 |

| N | Անվանումը | Տնտեսագիտական հոդված | Ճշտված պլան | Փաստացի դրամարկղային ծախս | Բյուջեի կատարման % |
|---|---|---|---|---|---|
| 12 | Տեղեկատվական ծառայություններ | **4234** | 950.0 | 934.0 | 98.3 |
| 13 | Կառավարչական ծառայություններ | **4235** | 588.0 | 588.0 | 100.0 |
| 14 | Ներկայացուցչական ծախսեր | **4237** | 6,372.0 | 6,029.0 | 94.6 |
| 15 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | **4239** | 3,917.2 | 2,221.2 | 56.7 |
| 16 | Մեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում | **4252** | 3,082.7 | 3,028.5 | 98.2 |
| 17 | Գրասենյակային նյութեր և հագուստ | **4261** | 973.7 | 885.1 | 90.9 |
| 18 | Տրանսպորտային նյութեր | **4264** | 2,712.8 | 2,346.8 | 86.5 |
| 19 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | **4267** | 473.1 | 376.8 | 79.6 |
| 20 | Պարտադիր վճարումներ | **4823** | 121.0 | 117.0 | 96.7 |

# 7.2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (+37460) 830-840
Էլ. փոստ՝ info@competition.am
Կայք՝ https://competition.am/hy/
Ֆեյսբուքյան էջ՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողով